ԻՄՔԱՅՎԸ
դաշինք

ԵՐՋԱՆԻԿ ԱՆՀԱՏ, ՀՈԳԱՏԱՐ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ, ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9, 2018

Նախաբան

«Իմ քայլը» դաշինքը 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցում է 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության վերջնական հաղթանակը ամրագրելու եւ իշխանությունը Հայաստանում անշրջելիորեն ժողովրդին վերադարձնելու համար:

«Իմ քայլը» դաշինքը ձեւավորված է ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունն առաջնորդած քաղաքական թիմի ներկայացուցիչներից եւ նրանց աջակցած ուժերից:

Դաշինքի քաղաքական թիմը այսօրվա դրությամբ կատարել է ժողովրդի առաջ իր ստանձնած բոլոր պարտավորությունները:

1. Մենք խոստացել էինք, որ եթե Հայաստանի ժողովուրդն արտահայտի իր կամքը, մենք կապահովենք Սերժ Սարգսյանի եւ նրա թիմի հեռացումը իշխանությունից. պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

2. Մենք խոստացել էինք, որ Հայաստանում ընտրությունների արդյունքների կեղծման պրակտիկան արմատախիլ կարվի, իշխանության ձեւավորումը տեղի կունենա բացառապես ժողովրդի ազատ կամարտահայտման միջոցով. 2018 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած Երեւանի ավագանու եւ հոկտեմբերին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների արդյունքներով պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

3. Մենք խոստացել էինք անզիջում պայքար մղել կոռուպցիայի դեմ. պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

4. Մենք խոստացել էինք վերացնել արհեստական տնտեսական մենաշնորհները: Այսօր որեւէ շուկայում մուտքի խոչընդոտներ եւ այլ սահմանափակումներ չկան, ի հայտ են գալիս եւ կգան նոր խաղացողներ. պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

5. Մենք խոստացել էինք, որ Հայաստանում չեն լինի արտոնյալներ եւ կապահովվի բոլոր մարդկանց հավասարությունը օրենքի առաջ. պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

6. Մենք խոստացել էինք անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրություններ. պարտավորությունը **լիարժեք կատարված է:**

Այսպիսով, Հայաստանի հանրապետությունում իշխանությունը վերադարձված է ժողովրդին եւ իսկապես պատկանում է ժողովրդին, եւ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իր ունեցած մեկ քվեով որոշելու է երկրի հետագա ճակատագիրը:

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք ընտրություններում մենք վստահության քվե ենք ակնկալում ձեզանից՝ առաջիկա հինգ տարիներին Հայաստանի կառավարման պատասխանատվությունը ստանձնելու համար:

Առաջիկա հինգ տարիներին մեր գործունեությունը միտված է լինելու տնտեսական հեղափոխություն իրականացնելուն: Մենք մտադիր ենք վճռական միջոցներ ձեռնարկել Հայաստանը արդյունաբերական, տեխնոլոգիական, նաեւ բնապահպանական բարձր չափանիշներ ունեցող երկիր դարձնելու ուղղությամբ:

Այս նպատակին հասնելու համար առանցքային նշանակություն ունեն՝

- Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության անվտանգության մակարդակի շարունակական բարձրացումը, Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը,
- աշխատանքի եւ ներդրումների խրախուսումը, աղքատության հաղթահարումը աշխատանքի եւ կրթության միջոցով,
- օրենքի գերակայության ապահովումը,
- բարեկեցության շարունակական բարձրացումը,
- պետական ծախսերի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն. այս ուղենիշներով է առաջնորդվում «Իմ քայլը» դաշինքը:

«Իմ քայլը» դաշինքի վարչապետի թեկնածուն Նիկոլ Փաշինյանն է:

«Իմ քայլը» դաշինքի գաղափարական թեզեր

«Իմ քայլը» դաշինքը շարունակելու է լրջագույն ջանքեր գործադրել՝ հասնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հասարակական, քաղաքական, իրավական, կենցաղային նոր հարաբերությունների հաստատմանը՝ հիմնված օրենքի առաջ բոլոր մարդկանց հավասարության, մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության եւ կիրառելիության, կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության, հայ ժողովրդի ազգային-պետական ինքնության, ինքնուրույնության եւ ինքնիշխանության պահպանման եւ զարգացման, հայ ժողովրդին Հայաստանի Հանրապետության իշխանության կրողի անօտարելի լծակներով օժտելու, **Հայաստանի՝ հայ ժողովրդի բնակության եւ զարգացման լավագույն եւ ամենագերադասելի վայրի կարգավիճակը վերահաստատելու** հրամայականների վրա:

Մենք համոզված ենք, որ անհատի վերափոխումը հանրային վերափոխման կարեւորագույն գործոն է. յուրաքանչյուր ոք կարող է սկսել հանրային վերափոխման գործընթաց՝ այդ նպատակին միտված կարեւորագույն անելիքներից մեկը համարելով սեփական անձի վերափոխումը: Յուրաքանչյուր քաղաքացի սեփական անձի զարգացումը՝ հմտությունների, գիտելիքների, իմացության ձեռքբերումն ու կատարելագործումը պետք է դիտարկի իբրեւ հանրային բարեփոխումների զարգացման կարեւորագույն բաղադրիչ: Պետությունը պետք է անհրաժեշտ միջավայր եւ մթնոլորտ ձեւավորի նման վերափոխումներին նպաստելու համար:

Մենք մերժում ենք բռնությունը՝ որպես ներհասարակական, անձնային հարցերի կարգավորման եղանակ՝ ընդունելով քաղաքացու, հանրության եւ պետության անհրաժեշտ պաշտպանությունը, օրինականությունը, հասարակական կարգը, հանրային անվտանգությունն ապահովելու իրավունքը:

Մենք արձանագրում ենք, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես պետության հիմնական ազգային գործառույթն է հայության մարդկային, տնտեսական, ֆինանսական, մտավոր ներուժի կամ նրա հիմնական մասի կենտրոնացումը Հայաստանի Հանրապետության տարածքում եւ այդ ներուժի անվտանգության ու բնականոն զարգացման ապահովումը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

Սեփական քաղաքացիների առաջ Հայաստանի Հանրապետության հիմնական պարտավորությունը նրանց անվտանգության եւ բարեկեցության ապահովումն է:

Քաղաքացիների անվտանգությունն ապահովելու պետական գործառույթը ներառում է.

- պաշտպանություն արտաքին ագրեսիայից,
- պաշտպանություն ապօրինություններից, այդ թվում՝ կոռուպցիայից եւ քաղաքական հետապնդումներից, ոտնձգություններից, իրավունքների ոտնահարումներից,
- պաշտպանություն բնական եւ տեխնածին աղետներից,
- պաշտպանություն համաճարակներից, հիվանդություններից,
- բնական պաշարների խելամիտ օգտագործումը, վայրի բնության պահպանությունը, նրան հասցված վնասի վերականգնումը:

Քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու պետական գործառույթը ներառում է.

- աշխատանքի, ձեռներեցության, ստեղծարարության քաջալերումը եւ անհրաժեշտ սոցիալական պատասխանատվությունը,
- կրթության քաջալերումը, որակյալ կրթության եւ առողջապահության մատչելիությունն ու հասանելիությունը,
- տնտեսական մրցակցությունը, տնտեսական ազատ գործունեության հնարավորությունը,
- հանրահռչակ ազատությունների լիակատար կիրառման հնարավորությունը,
- հոգեւոր, մշակութային պահանջների բավարարումը, ստեղծագործական միջավայրի զարգացումը,
- հատուկ կարիքներ ունեցող խմբերի իրավունքների եւ արժանապատվության պաշտպանությունը եւ նրանց սոցիալական ներառման ապահովումը,
- կանաչ գոտիների պահպանումը եւ բազմապատկումը, քաղաքաշինական միջավայրի մարդակենտրոն կազմակերպումը:

Անվտանգության եւ բարեկեցության ապահովման պետական գործառույթի իրականացումը բավարար պայմաններ կստեղծի անհատի եւ ողջ հանրության երջանկության համար, իսկ իրավունքի եւ օրինականության վրա հիմնված ազգային միասնությունը կդառնա այն գործոնը, որը կամբողջացնի անհատի եւ հանրության երջանկության համար անհրաժեշտ պայմանները:

Անհատական ջանքը քաղաքական, տնտեսական, մարդու իրավունքների բնագավառում եւ հանրային կյանքի մյուս ոլորտներում զարգացման կարեւոր գործոն է: Անհատի զարգացման ուղղությամբ պետության հիմնական գործառույթը քաղաքացիների ստեղծարար ընդունակությունների զարգացման եւ իրացման համար հնարավորություններ ստեղծելն է հանրային կյանքի բոլոր բնագավառներում՝ գիտություն, մշակույթ, սպորտ, կրթություն, քաղաքականություն, տնտեսություն եւ այլն: Ըստ այդմ՝ օրենքով չարգելված ցանկացած գործունեություն լինելու է հանրամատչելի: Յուրաքանչյուր ոք սոցիալական, գիտական, քաղաքական դիրքին արժանանալու է օբյեկտիվ-ստեղծարար ընդունակությունների իրացմամբ:

Քաղաքական ասպարեզում սա ենթադրում է անառարկելիորեն մրցակցային եւ ազատ ընտրական համակարգի գործադրում, երբ երկրի քաղաքական կառավարման գործառույթները բաշխվում են ժողովրդի ազատ կամքի արտահայտմամբ, ինչը ստեղծում է հավասար հնարավորություններ երկրի կառավարման հավակնորդների համար: Ազատ քաղաքական մրցակցությունն է միակ երաշխիքը, որ երկիրը կունենա առավել արդյունավետ կառավարություն:

Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձեւավորման գործում, տնտեսական գործունեության ոլորտում գործարար հմտություններ ունեցող առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար: Տնտեսական, բիզնես դաշտը պետք է ձեւավորվի ազատորեն, գործարար հմտությունների անաչառ մրցակցության՝ հովանավորչության բացառման պայմաններում: **Սա նաեւ աղքատության հաղթահարման առանցքային պայման է, երբ գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր ոք պետք է բիզնես արդյունք ստեղծելու, ինքն իր եւ շրջապատի բարեկեցությունն ապահովելու հնարավորություն ստանա հավասար, մրցակցային պայմաններում:** Կարեւոր է

ձեւավորել օրենսդրական եւ գործնական միջանցք Հայաստանում «զրոյից» տնտեսական գործունեություն սկսելու իրական հնարավորություններ ձեւավորելու համար: Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար առաջնային է ոչ միայն Զինված ուժերի մարտունակության, հատուկ ծառայությունների ու դիվանագիտական կորպուսի գործունակության շարունակական բարձրացումը, այլեւ Հայաստանի բնակչության թվի աճը. ըստ այդմ՝ առաջիկա 20 տարիներին ՀՀ բնակչության թիվը պետք է կրկնապատկվի: Այս խնդրի լուծման կարեւորագույն միջոցներն են Հայաստանի Հանրապետությունից տեսանելի արտագաղթի դադարեցումը, հին եւ նոր սփյուռքը ներկայացնող հայերի՝ դեպի Հայաստանի Հանրապետություն հայրենադարձության հարաճուն գործընթացի հարուցումը, ծնելիության աճը:

Ներքաղաքական ասպարեզում Հայաստանի առաջ ծառացած կարեւորագույն խնդիրը անշրջելի ժողովրդավարության հաստատումն է: Համաձայն ձեւակերպման՝ ժողովրդավարությունն իշխանության խաղաղ, անարյուն, ընտրական ճանապարհով փոփոխությունն է, փոփոխության իրական հնարավորությունը: Ժողովրդավարության գործնական կիրառումն, ըստ այդմ, ընդդիմության իշխանության հասնելն է խաղաղ, ընտրական ճանապարհով, իշխանություն դարձած իշխանության հեռացումը իշխանությունից խաղաղ, ընտրական ճանապարհով, եւ այդպիսի պարբերական մեխանիզմի կիրառումը՝ համաձայն ազատ, արդար, օրինական, վստահելի ընտրական համակարգի արձանագրած ժողովրդի ազատ կամարտահայտման:

Քաղաքականությունը պետք է լինի հրապարակային. քաղաքական գործընթացների, դրանց բովանդակության ու մանրամասների վերաբերյալ հանրության առավելագույն իրազեկումը ժողովրդավարության կարեւորագույն բաղադրիչ է, որն անհնար է իրագործել առանց խոսքի, մամուլի եւ համացանցի ազատության: Հանրային, պետական հարցերի վերաբերյալ քաղաքական, հանրային բանավեճն անընդհատ գործընթաց է եւ չպետք է դադարի՝ դառնալով հանրային էներգիայի հարաճուն աղբյուր: Այսօրինակ բանավեճի կարեւորագույն հարթակը ազատ լրատվամիջոցներն են, ազատ եւ բազմազան հարթակները (ժողովրդավարական ինստիտուտները), որոնց գոյության երաշխավոր լինելը ժողովրդավարական իշխանության առաջնային պարտավորությունն է: Այս ինստիտուտները պետք է դառնան հասարակական կարծիքի արտահայտման հարթակ, ինչը ընտրությունից ընտրություն ընկած ժամանակահատվածում երկրի կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցության կարեւորագույն ինստիտուտ է:

Օրենքները դառնալու են անձնային, խմբային, հանրային հարաբերությունների կարգավորման նոր ավանդույթների ձեւավորման առանցք: Հարաբերությունների կարգավորման եղանակները, որ լայնորեն փոխ են առնվում հանցագործ աշխարհից, կոռումպացված հարաբերություններից, պետք է արմատախիլ արվեն հանրային հարաբերությունների բոլոր մակարդակներից: Ոստիկանություն, դատարան դիմելը դառնալու է իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիք, հանցագործությունները կանխելը, ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության մասին հայտնելը լինելու է յուրաքանչյուր քաղաքացու գիտակցված պարտավորություն:

Անկախ դատական համակարգի առանցքային գործառույթը հասարակական-քաղաքական եւ տնտեսական մրցակցության, սեփականության եւ այլ իրավունքների պաշտպանությունն է. հասարակական-քաղաքական եւ տնտեսական մրցակցության, առավել արդյունավետ քաղաքական եւ տնտեսական կառավարման արդյունքում պետք է ձեւավորվի բավարար ազգային արդյունք՝ արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու, կրթության եւ գիտության՝ միջազգային չափանիշերին համապատասխանող ֆինանսավորման, մշակույթի, սպորտի, զարգացման համար:

Ղարաբաղի հարցի կարգավորման որեւէ ծրագրի իրագործում հնարավոր է միայն Լեռնային Ղարաբաղի՝ բանակցային լիարժեք կողմի կարգավիճակի վերականգնմամբ, առանց որի համաձայնության հարցի կարգավորման որեւէ տարբերակ չի կարող համարվել դե յուրե ընդունված:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի անվտանգության կարեւոր երաշխիք է. ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը պետք է շարունակվի մինչեւ համաշխարհային ճանաչում:

Բանակ և անվտանգություն



1. Բանակ եւ անվտանգություն

Ներկայիս փոփոխվող անվտանգության միջավայրում Հայաստանի անվտանգության ապահովման կարեւորագույն նախապայմաններից է այդ միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին եւ պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձեւավորումը, ինչը հնարավորություն կտա ստեղծել մեր ազգային առաջնահերթությունները կյանքի կոչելու համար կայուն եւ կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար ներուժ:

Զինված ուժերի մարտունակության եւ արդյունավետության համապատասխանեցումը անվտանգության միջավայրի փոփոխվող պահանջներին պաշտպանության ոլորտում մեր քաղաքական առաջնահերթությունն է: Պաշտպանության երկարաժամկետ պլանավորման նպատակներն ու խնդիրները պետք է սահմանվեն առկա եւ հավանական ռազմական բնույթի սպառնալիքների, դրանց չեզոքացման հասանելի ռեսուրսների եւ հնարավորությունների համակողմանի գնահատման հիման վրա: Այդ նպատակով մենք կնախաձեռնենք պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթաց՝ սահմանելով հետեւյալ քաղաքական պահանջները.

- ✓ Զինված ուժերը ունակ են լինելու ադապտացվելու ռազմական անվտանգության ապահովման եւ պատերազմի վարման փոփոխվող պահանջներին, անընդհատ կատարելագործվելու են, ի զորու են լինելու կանխատեսելու, կանխելու, զսպելու, հակադարձելու կամ չեզոքացնելու առկա ու հավանական ռազմական բնույթի սպառնալիքներն ու մարտահրավերները, ունենալու են ժամանակակից ռազմագիտության վրա հիմնված ապակենտրոնացված ու տարատեղված գործողություններ վարելու կարողություններ՝ որոշումների կայացման եւ գործողությունների իրականացման ընթացքում հակառակորդի նկատմամբ առաջանցում ապահովելու նպատակով:

- ✓ Զինված ուժերը համալրված են լինելու այսօրվա ռազմական գիտության պահանջներին համապատասխան արդիական զինատեսակներով եւ տեխնոլոգիաներով, գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածների, հրետանային խոցման եւ հակաօդային պաշտպանության ժամանակակից համակարգերով, որոնք ավելացնելու են իրենց հարվածային եւ կրակային խոցման հեռավորությունը, ճշգրտությունը եւ արդյունավետությունը, հետեւողականորեն զարգացնելու են բազմաֆունկցիոնալ ավիացիան, անօդաչու թռչող սարքերի համակարգերը, հակառակորդի տարածքի ամբողջ խորությամբ ռադիոէլեկտրոնային ու օդային հետախուզության կարողությունները: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը համալրվելու են ռազմական կործանիչներով:

- ✓ Անվտանգության ապահովման կարեւորագույն բաղադրիչ է հայրենական ռազմական արդյունաբերության զարգացումը: Հայկական զինված ուժերը համալրված են լինելու տեղական ռազմական արդյունաբերության արտադրանքով, որը շարունակական կատարելագործման միջոցով ապահովելու է բանակի մարտունակությունը:

- ✓ Զինված ուժերի անձնակազմը, չնայած պարտադիր զինվորական ծառայության պահպանմանը, լինելու է առավելապես արհեստավարժ, սպայական եւ ենթասպայական կազմն ապահովվելու է հիմնականում հայրենական շարունակական ռազմական կրթության հնարավորություններով, վարժվելու է մարտական պատրաստության այնպիսի չափորոշիչներով, որոնք ունակ են լինելու Զինված ուժերի, Զինված ուժերի ստորաբաժանումների եւ անհատական մակարդակներում ապահովել մարտական բավարար վարպետություն, լինելու է սոցիալապես ապահովված եւ քաղաքական առումով՝ չեզոք: Անձնակազմն ապահովված է լինելու բոլոր անհրաժեշտ պարագաներով եւ ծառայություններով:

- ✓ Զինված ուժերի կառավարման համակարգը լինելու է առավելապես ավտոմատացված, ունենալու է ժամանակակից ռազմական գործողություններ վարելու համար բավարար օպերատիվություն, կենսունակություն, շարժունակություն եւ տեխնոլոգիական հագեցվածություն, ինչպես նաեւ կիբեր պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ տեխնիկա եւ կարողություններ, առաջնորդվելու է նախաձեռնողականության, արագ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու եւ գործելու խթանմանը միտված «Հրամանատարում առաջադրանքի միջոցով» կառավարման ու ղեկավարման սկզբունքով:

- ✓ Զինված ուժերի մարտական հերթապահության համակարգը աշխարհագրորեն թույլատրելի հատվածներում աստիճանաբար փոխարինելու ենք դինամիկ պաշտպանությամբ, դարձնելու ենք տեխնոլոգիապես եւ ինժեներական առումով հագեցված՝ անձնակազմի առավելագույն անվտանգությունն ապահովելու նպատակով:

- ✓ Զինված ուժերի ապահովման համակարգը դարձնելու ենք թափանցիկ, մասնավոր հատվածի առավելագույն ներգրավմամբ ապահովելու ենք ռեսուրսների կառավարման (պլանավորում, գնումներ, սպառում), վերահսկման եւ հաշվետվողականության թափանցիկ ընթացակարգեր, որոնք երաշխավորելու են պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների զարգացում, բաշխում, կառավարման եւ բյուջետային որոշումների ներդաշնակեցում, բյուջետային ծրագրերի նյութատեխնիկական առումով կայունություն, մրցակցող պահանջների միջեւ ռացիոնալ որոշումների կայացում:

- ✓ Բարելավելու ենք ծառայության պայմանները, զարգացնելու ենք զինվորական ծառայողների սոցիալական պաշտպանության համակարգը: Այսուհետ բոլոր ծառայողներն ունենալու են օրենքով սահմանված անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաները:

- ✓ Զինված ուժերի արտաքին հարաբերությունների համակարգը ապահովելու է ՀՀ ազգային շահերից բխող եւ առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձեւավորված հավասարակշռությունն ու միջազգային ինտեգրումը, դաշնակցային պարտավորությունների հստակեցումը, հավաքական պաշտպանության մեխանիզմների եւ դրանով իսկ անվտանգության ապահովման միջազգային եշախիքների ամրապնդումը:

Վերոնշյալ քաղաքական պահանջների բավարարմանն ուղղված պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը կմշակի նոր պաշտպանական ռազմավարություն եւ ռազմավարական պլանավորման փաստաթղթեր:

Արցախը՝ բանակցային կողմ

ԵՄ վիզային ռեժիմի
ազատականացում

Սփյուռքը՝ մասնակից ՀՀ կառավարմանը
Հայրենադարձություն

2. Արտաքին քաղաքականություն

Արտաքին քաղաքական առանցքային նպատակն է լինելու Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ անվտանգության ապահովումը, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը: Մեր քայլերն ուղղված են լինելու նոր շուկաների ձեռքբերմանն ու ներդրումների ապահովմանը, միջազգային ասպարեզում իրավահավասար ու արժանապատիվ հարաբերությունների հետագա զարգացմանը, համաշխարհային եւ տարածաշրջանային քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, կրթական եւ նորարարական գործընթացներին պետության եւ ժողովրդի լայն ներգրավվածության ապահովմանը, Հայաստանի Հանրապետության հեղինակության եւ հայկական քաղաքակրթության ճանաչելիության բարձրացմանը: Հայաստանի սահմաններից դուրս գտնվելիս Հայաստանի Հանրապետության անձնագիրը կրող յուրաքանչյուր քաղաքացու հպարտության եւ իրական պաշտպանվածության զգացումը լինելու է միջազգային հարաբերություններում մեր քայլերի կարեւոր ուղենիշը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի Հանրապետության եւ միջազգային անվտանգության կարեւոր գործոն է եւ լինելու է մեր առաջնահերթությունների շարքում:

Միջազգային հանրության օրակարգային հարցերում մեր **քայլերն** ուղղված են լինելու Հայաստանի Հանրապետության դերակատարության բարձրացմանը եւ առաջամարտիկի դերի ստանձնմանը՝

- Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման եւ հակամարտությունների խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերի ներդրման գործում,
- Հայոց ցեղասպանության եւ մարդկության դեմ հանցագործությունների ճանաչման, դատապարտման եւ կանխարգելման գործում,
- մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության եւ այդ բնագավառում միջազգային համագործակցության ոլորտում,
- ահաբեկչության, միջազգային եւ տարածաշրջանային խաղաղությանն ուղղված սպառնալիքների դեմ միջազգային պայքարում,
- գալիք սերունդներին առավել ապահով, խաղաղ, հավասար, էկոլոգիապես մաքուր մոլորակ թողնելու նպատակով ազգերի համատեղ ջանքերն ամբողջականացնող միջազգային գործընթացներում:

Արտաքին քաղաքականության բնագավառում մեր քայլերը միտված են լինելու բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելուն եւ նոր շունչ հաղորդելուն, մասնավորապես՝

1. ապահովելու ենք հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, իրավահավասարության եւ ազգային շահերի փոխադարձ հարգանքի վրա հիմնված՝ Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների հետագա զարգացումը:
2. Եվրասիական տարածաշրջանի երկրների հետ ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ շրջանակներում զարգացնելու ենք փոխշահավետ համագործակցություն եւ խորացնելու ենք երկկողմ հարաբերությունները:
3. ապահովելու ենք սահմանակից երկրների՝ Վրաստանի եւ Իրանի հետ առանձնահատուկ հարաբերությունների հետագա զարգացումը՝ անկախ աշխարհաքաղաքական ազդեցություններից:
4. ԱՄՆ-ի հետ զարգացնելու ենք բարեկամական, գործընկերային հարաբերությունները տնտեսական, գիտակրթական եւ հասարակական տարբեր ոլորտներում:
5. քայլեր ենք ձեռնարկելու Եվրամիության հետ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի լավագույնս կիրարկման ուղղությամբ, ԵՄ անդամ եւ եվրոպական տարածաշրջանի այլ երկրների հետ համագործակցության խորացման եւ պատմական կապերին նոր շունչ հաղորդելու ուղղությամբ: Հասնելու ենք ՀՀ քաղաքացիների համար ԵՄ տարածքում վիզային ռեժիմի ազատականացմանը:
6. լինելու ենք նախաձեռնող Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի եւ խաղաղօվկիանյան այլ երկրների հետ կապերի ամրապնդման եւ նոր համագործակցային հարաբերությունների կայացման ուղղությամբ:
7. նպաստելու ենք Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդլայնմանը, հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգությանը եւ շահերի պաշտպանությանը:
8. շարունակելու ենք պատմականորեն ձեւավորված բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացումը Կանադայի, Արգենտինայի եւ ամերիկյան մայրցամաքի այլ երկրների հետ:
9. նպաստելու ենք աֆրիկյան պետությունների հետ համագործակցության զարգացմանը:
10. ապահովելու ենք ՄԱԿ-ում եւ համաշխարհային ընդգրկվածություն ունեցող միջազգային կազմակերպություններում Հայաստանի առավել ակտիվ եւ ներգործուն մասնակցությունը, տարածարջանային ընգրկվածությամբ ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացումը եւ պաշտպանությունը:
11. նպաստելու ենք ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակությանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետեւողական իրականացմանը:
12. ջանքեր ենք գործադրելու Ֆրանկաֆոնիայի միջազգային կազմակերպությունում 2018-2020թթ. Հայաստանի նախագահության լավագույնս իրականացման եւ հետագայում կազմակերպության շրջանակներում ՀՀ ներգրավվածության առավել խորացման ուղղությամբ:

Հայաստանի անմիջական հարեւան Ադրբեջանի հետ վատթար հարաբերությունները շարունակելու են պայմանավորված մնալ ղարաբաղյան հակամարտության շրջանակներում վերջինիս ռազմաշունչ դիրքորոշմամբ եւ պետական հովանավորչությամբ հայատյացության սերմանման դատապարտելի մակարդակով: Միայն ադրբեջանական կողմից ներկայիս դիրքորոշման փոփոխումը, Արցախի ժողովրդի անվտանգությանն ուղղված սպառնալիքի վերացումը եւ ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված իրական եւ անկեղծ կամքի դրսեւորումը կարող են միջավայր ստեղծել երկու երկրների միջեւ շփումներ հաստատելուն ուղղված քայլերի մեկնարկի համար:

Հայաստանի անմիջական մյուս հարեւան Թուրքիայի կողմից շարունակական շրջափակման պայմաններում բարիդրացիական հարաբերությունների հաստատմանն ուղղված հայկական կողմի միակ ընդառաջ քայլը հայ-թուրքական սահմանն առանց նախապայմանների բացելու պատրաստակամության հայտարարումն է, ինչը հնարավոր է միայն թուրքական կողմից երկկողմ հարաբերությունների կարգավորումը ձգձգելու նպատակով երրորդ երկրներին վերաբերող պատրվակների որպես նախապայման չօգտագործելու դեպքում:

Արտաքին քաղաքականության իրականացման մեր **քայլերի** հիմքում ընկած է լինելու ինչպես Հայաստանի ժողովրդի, սփյուռքահայության հավաքական շահի, այնպես էլ անհատապես յուրաքանչյուր քաղաքացու եւ իրավաբանական անձի իրավունքների եւ շահերի պաշտպանությունը: Հայաստանի միջազգային հեղինակությունը եւ միջազգային ասպարեզում ցանկացած ձեռքբերում պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, եւ այլ ժողովուրդների հետ հարաբերություններում հայաստանցու արժանապատվությունն ու իր երկրի համար հպարտությունն է լինելու մեր բոլոր **քայլերի** գերնպատակը:

Մենք նաեւ գիտակցում ենք, որ Հայաստանի միջազգային հեղինակությունը կախված է ոչ միայն անվտանգության համակարգերի կատարելության աստիճանից, այլեւ ժողովրդավարության հիմնարար սկզբունքների կիրառումից: Հետեւաբար առաջադեմ եւ կայացած ժողովրդավարական երկիր կառուցելու մեր մղումը այն հիմնական գործոնն է, որը ոչ միայն նպաստելու է Հայաստանի քաղաքացիների երջանկության ապահովմանը, այլեւ Հայաստանի՝ որպես համաշխարհային դերակատարի դերի մեծացմանը:

3. Ազատ եւ զարգացած Արցախ

Արցախը հայ ժողովրդի արժանապատվության միջնաբերդն է: Հայաստանի համար Արցախը պարզապես հողատարածք չէ, ինչպես եւ Արցախի հարցը տարածքային հարց չէ: Արցախը ժողովուրդ է, սեփական ճակատագրին տեր կանգնած ժողովուրդ՝ իր միակ ու անզիջելի հայրենիքով: Այդ հայրենիքի անվտանգության եւ ինքնորոշման իրավունքի երաշխավորն է Հայաստանի Հանրապետությունը:

Մեզ համար գերնպատակ է լինելու ազգերի ինքնորոշման իրավունքի կենսագործմամբ Արցախի ժողովրդի՝ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքի անխախտելիությունը եւ միջազգային ճանաչումը ապահովելը:

Արցախի ժողովրդի, միջազգային իրավունքի նպատակներին եւ սկզբունքներին համապատասխան, ինքնորոշման իրավունքի իրականացման նպատակով մեր **քայլերն** ուղղվելու են՝

1. Ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման գործընթացի շարունակական իրականացմանը,
2. Արցախի՝ որպես հակամարտության հիմնական կողմի՝ կարգավորման գործընթացում որոշիչ ձայնի ճանաչմանը եւ բանակցություններին ներգրավվածության ապահովմանը,
3. հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի նվազեցմանը եւ հետաքննման մեխանիզմների ներդրմանը,
4. Արցախի բնակչության ֆիզիկական անվտանգության արտաքին սպառնալիքների չեզոքացմանը,
5. Արցախի միջազգային կապերի, բնակչության ազատ տեղաշարժի եւ հումանիտար շփումների օժանդակմանը:

Մեր քայլերն իրականացվելու են՝

- ղեկավարվելով հայ ժողովրդի հավաքական շահով եւ Արցախի անվտանգ գոյության իրական երաշխիքների հրամայականով,
- պահպանելով ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափով տեղի ունեցող առկա գործընթացի շրջանակները,
- հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարությունը եւ ինքնորոշման իրավունքը:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, պաշտպանության քաղաքականության եւ տնտեսական քաղաքականության ոլորտներում մեր քայլերը դիտարկվելու են նաեւ Արցախի ժողովրդի վրա այդ քաղաքականության իրականացման ազդեցության հեռանկարի համատեքստում:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման որեւէ տարբերակ, որն ընդունելի չէ Հայաստանի եւ Արցախի ժողովուրդների համար՝ ընդունելի չի լինելու Հայաստանի Հանրապետության կառավարության համար:

4. Ուժեղ Հայաստան, ուժեղ սփյուռք

Հայաստան-սփյուռք հարաբերությունների նախորդ գրեթե մեկդարյա փորձի վերագնահատմամբ, հիմնվելով նաեւ պետություն-սփյուռք հարաբերությունների կառուցման միջազգային լավագույն փորձի վրա՝ մեր առաջնահերթությունն ենք հռչակելու հայրենիքի եւ սփյուռքի միջեւ կապի ամրապնդումը փոխադարձ վստահության մթնոլորտում, ափյուռքի համայնքների համախմբումը եւ ջանքերի մեկտեղումը հայրենիքի զարգացման գաղափարի շուրջ:

Հասկանալով հայկական սփյուռքի համայքների բազմազան եւ բազմաշերտ լինելը եւ ելնելով հայրենիք-սփյուռք նախաձեռնությունների վերափոխման անհրաժեշտությունից՝ առաջնահերթ ենք համարում աշխարհասփյուռ հայրենակիցների ակտիվ մասնակցությամբ սփյուռքի ներգրավման նորարարական ռազմավարության եւ ճանապարհային քարտեզի մշակումը, որի հիմքում ընկած են լինելու հայկական գաղթօջախների առանձնահատկությունների ուսումնասիրումը եւ առկա մարդկային ներուժի փոխշահավետ օգտագործման հրամայականը:

Սփյուռքի նորարարական քաղաքականության մեր ռազմավարությունն ուղղված է լինելու **«Ուժեղ Հայաստան, Ուժեղ Սփյուռք»** տեսլականի իրագործմանը, որի կարեւորագույն ուղղություններ ենք սահմանելու հետեւյալ միջոցառումները.

1. իրականացնելու ենք սփյուռքի բազմազան օջախներում առկա ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտություններ, այդ ներուժի քարտեզագրմանն ու ներգրավմանը ուղղված աշխատանքներ:
2. քննարկումներ ենք սկսելու սփյուռքի մեր հայրենակիցների՝ Հայաստանում ներկայացվածության ինստիտուցիոնալացման շուրջ:
3. կարեւորելու ենք այնպիսի օրենսդրական փոփոխությունների իրականացումը, որոնք կվերացնեն սփյուռքի ներուժը Հայաստանի կառավարման համակարգում ներգրավելու արգելքները:
4. **մշակելու եւ իրագործելու ենք սփյուռքի ներուժի վերարտադրմանն ու սփյուռքի ուժեղացմանն ուղղված ծրագրեր** տարբեր երկրներում հաստատված համայնքների, կազմակերպությունների, խմբերի, անհատների ղեկավարությամբ, խորհրդատվությամբ եւ մասնակցությամբ:
5. քայլեր ենք ձեռնարկելու **Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման**, ինչպես նաեւ սոցիալ-տնտեսական զարգացման ու ռազմավարական այլ նպատակների համար **սփյուռքի ներուժի հավաքագրման ուղղությամբ**:
6. Մշակելու ենք **հայրենադարձության կազմակերպման ծրագրեր,** որ հիմնականում միտված են լինելու վերջին տասնամյակներին Հայաստանից արտագաղթած ՀՀ քաղաքացիների բարեհաջող վերահաստատմանը հայրենիքում, ինչպես նաեւ Հայաստանում հաստատվել ցանկացող սփյուռքահայերին քաջալերմանը:
7. սփյուռքի ուժեղացման կարեւոր գործոն է նաեւ «հայկական կյանքից» օտարվող եւ օտարված մեր հայրենակիցների վերաինտեգրումը հայկական իրականությանը:

Մենք հավատում ենք, որ ուժեղ Հայաստանն ու ուժեղ սփյուռքը փոխպայմանավորված են. ուժեղ Հայաստան ունենալու կարեւորագույն գրավականը ուժեղ սփյուռքի գոյությունն է, սակայն Հայաստանը կարեւորագույն դեր կարող է եւ պետք է ունենա իրենց երկրներում սփյուռքի բազմազան համայնքների, կազմակերպությունների, հաստատությունների ու անհատների ուժեղացման գործում:

Մրցունակ, մասնակցային և ներառական

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մրցունակ եւ մասնակցային տնտեսություն

Մեր տնտեսական քաղաքականության անկյունաքարը Հայաստանի տնտեսության մրցակցային առավելությունների ընդլայնմամբ գլոբալ մրցունակության բարձրացումն է, գիտելիքի եւ նորարարությունների վրա հիմնված արդիական տնտեսական համակարգի ձեւավորումը, Հայաստանի քաղաքացու համար արժանապատիվ աշխատանքի հնարավորության ընձեռումը, բնակչության կյանքի որակի բարձրացումը:

Տնտեսական քաղաքականության հիմքում դնելու ենք արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի խրախուսմանը միտված ներդրումային քաղաքականությունը: Արդյունքում տնտեսության կառուցվածքը պետք է էական փոփոխություններ կրի:

Տնտեսական աճը համընդհանուր ջանքերի արդյունք է: Այս պատճառով միակողմանի որոշումներ կայացնելու նախկինում գործող պրակտիկան վերափոխելու ենք: Հիմնվելով հանրության, գործարար, ակադեմիական համայնքի, ոլորտային մասնագետների եւ կառույցների հետ քննակումների արդյունքների վրա՝ սահմանելու ենք ռազմավարական ուղղություններով ճյուղային քաղաքականությունները: Երկխոսությունը ոչ միայն խնդիրներն ահազանգելու, կամ փոփոխություններին նախապատրաստվելու կանխատեսելի միջավայր կձեւավորի, այլեւ կստեղծի հավասար մրցակցային պայմաններ դաշտում գործող սուբյեկտների համար:

Մեր գործունեության անկյունաքարը կանխատեսելիության եւ որոշակիության անընդհատ կատարելագործմամբ՝ աշխարհում Հայաստանի, ներդրումային տեսանկյունից մրցակցային առավելություններ ունեցող երկրի, ճանաչելիության բարելավումն է:

5. Ներառականությունն ու մրցունակությունը՝ տնտեսական աճի գրավական

Մենք նպաստելու ենք այնպիսի միջավայրի կայացմանը, որտեղ աճ ստեղծելու եւ աճին մասնակցելու յուրաքանչյուր հայաստանցու իրավունքը կլինի ոչ միայն պաշտպանված, այլեւ կխրախուսվի: Մենք, հավատարիմ մնալով զարգացման գործընթացներում ներառականության ապահովման նշանակալի դերին, գործարար եւ ակադեմիական շրջանակի ներկայացուցիչների հետ ակտիվ երկխոսության ճանապարհով սահմանելու ենք կառուցվածքային բարեփոխումների հավակնոտ հրամակայան, որտեղ յուրաքանչյուրիս վերագրված կլինի բարեկեցության ապահովման պատասխանատվության մեր բաժինը:

Մենք կարեւորում ենք տնտեսական զարգացման սոցիալական արդյունքը: Տնտեսության զուտ թվային աճը, որն էականորեն չի բարելավում մարդկանց կյանքը, մնում է որպես սովորական վիճակագրություն: Մինչդեռ տնտեսական զարգացման եւ ստեղծված արժեքի բաշխման նոր մոդելով ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի անմիջական մասնակցություն է ունենալու տնտեսական աճի ապահովման բոլոր գործընթացներին:

Տնտեսական զարգացման մեր տեսլականը կառուցել ենք այն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր մարդ ունի ստեղծագործ ներուժ, եւ մեր գերնպատակն է լինելու ստեղծել բոլոր հնարավոր պայմաններն այդ ներուժի զարգացման եւ իրացման համար: Մեր խորին համոզմամբ՝ տնտեսական զարգացման ցանկալի արդյունքի եւ անորոշությունների հաղթահարման միակ եղանակը համատեղ ազնիվ աշխատանքն է:

Մենք նախատեսում ենք կարճաժամկետ հատվածում նվազեցնել վարչարարական բեռը, վերացնել գործարարության համար խոչընդոտ հանդիսացող կարգավորումները, իրականացնել ներդրումներ ենթակառուցվածքներում, բարելավել կրթության որակը, բարեփոխել առողջապահության համակարգը եւ խթանել արտահանումը:

Մեր առաջնահերթությունն աշխատանքի եւ ներդրումների խրախուսմամբ գործազրկության կրճատում եւ տնտեսական աճ ապահովելն է, դրան հասնելու մեթոդը՝ անարդյունավետ պատճառահետեւանքային կապերի եւ ավելորդ բյուրոկրատիայի վերացմանը միտված հետեւողական աշխատանքը, նպատակադրումը՝ առկա խոչընդոտների բացահայտման եւ լուծման միջոցով մրցունակության համակարգային բարելավմամբ տնտեսության իրական հատվածի եւ արտահանման շուկաների դիվերսիֆիկացիան:

Մենք ունակ ենք աշխատանքի միջոցով մեր տեղը վաստակել միջազգային ասպարեզում: Դա անելու համար հարկավոր է տարբեր ոլորտներում ապահովել արտադրողականության աճ եւ մրցակցակային հնարավորությունների ընդլայնում: Առաջարկվող տնտեսական մոդելով շարունակաբար պարտքեր կուտակելու փոխարեն այսուհետ միջոցները խնայելու ենք՝ մարդկային ներուժի եւ ավելացված արժեք ապահովող ենթակառուցվածքների զարգացմանն ուղղելու, հետագայում արտահանման ծավալները մեծացնելու նպատակով: Այն է՝ ստեղծելու ենք հավելյալ արժեք աշխարհի համար:

Երկրում տնտեսական աճ ապահովող հիմնական ուժը լինելու է մասնավոր հատվածի ներդրումը եւ ձեռներեցությունը: Պետության գործունեությունը պետք է միտված լինի տնտեսական աճի ապահովմանը եւ զերծ մնա հավելյալ խոչընդոտներ ստեղծելուց կամ տնտեսապես ոչ արդյունավետ ծրագրերի վրա միջոցներ վատնելուց:

Հայաստանի առջեւ ծառացած այս խնդիրների զգալի մասը կարող է եւ ունակ է լուծել միայն զարգացած մասնավոր հատվածը, իսկ պետության դերը լինելու է մրցունակության գործոնների հետեւողական զարգացումը եւ աճի ու զարգացման խոչընդոտների վերացումը:

Մեր հիմնական գերակայություններն են լինելու՝

1. տնտեսական բարեփոխումները՝ տնտեսության բոլոր ճյուղերի մրցունակության խթանման համար անհրաժեշտ եւ բավարար պայմաններ ստեղծելը,
2. հավելյալ արժեք գեներացնող ենթակառուցվածքների (ավտոճանապարհներ, ջրամբարներ, ջրագծեր՝ ոռոգման, խմելու ջրի, ջրահեռացման, էլեկտրահաղորդակցության ցանցեր, համացանցի հասանելիություն) շարունակական բարելավմամբ տարածքային համաչափ զարգացում ապահովելը,
3. մասնավոր հատվածի հետ շարունակական երկխոսությամբ եւ փաստացի կարիքների գնահատմամբ հանրային քաղաքականության բարելավումը,
4. շուկայական մեխանիզմների ձախողումները լուծող արդյունավետ ինստիտուտներ ներդնելը: Այդպիսի ինստիտուտներ են ասոցիացիաները, միությունները, կոոպերատիվները: Պետությունը պետք է նպաստի ասոցիացիաների ստեղծմանը եւ կայացմանը եւ հետզհետե պատվիրակի տնտեսական կարգավորման իր գործառույթները հենց տնտեսվարողներին: Սա նաեւ ներառականության կարեւորագույն սկզբունք է, քանզի ասոցիացիաների միջոցով սուբյեկտները ներգրավված են իրենց վերաբերվող որոշումների կայացմանը:
5. հատուկ ուշադրության են արժանանալու բարձր տեխնոլոգիաների ոլորտը, վերամշակող եւ թեթեւ արդյունաբերությունը, բարձրարժեք գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը:

6. Տնտեսական բարեփոխումների առաջնահերթությունները

Տնտեսական որակական առաջընթացի հիմնասյունը հասցեական բարեփոխումներն են՝ ուղղված արտաքին շուկաներում Հայաստանը՝ որպես բրենդ դիրքավորելուն: Մենք, ունենալով փոքր ներքին շուկա, չենք կարող սահմանել զարգացման այլ օրակարգ, քան սեփական կարողությունների շարունակական զարգացմամբ, արտաքին շուկաներին մրցունակ առաջարկ ներկայացնելն է: Մենք պետք է առաջնորդվենք արտահանման վրա հիմնված տնտեսական աճի մոդելով եւ խթանենք արտաքին շուկաներ ներթափանցելու տնտեսական կարողությունները:

Մենք նախատեսում ենք՝

- նվազեցնել վարչարարական բեռը,
- վերացնել գործարարության համար խոչընդոտ հանդիսացող կարգավորումները,
- պարզեցնել հարկային եւ մաքսային քաղաքականությունը,
- ընդլայնել արտահանման ծավալները,
- իրականացնել ներդրումներ ենթակառուցվածքներում

Այս նպատակներին հասնելու համար ձեռնարկելու ենք հետեւյալ քայլերը՝

1. վերացնելու ենք բիզնես սկսելու, զարգացնելու եւ լուծարելու բյուրոկրատական բոլոր սահմանափակումները: Կրճատելու ենք լիցենզիաների, թույլտվությունների եւ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար չհիմնավորված պահանջների քանակը, վճարները եւ ժամկետները: Կարգավորումները լինելու են պարզ, հասկանալի եւ ծառայեցված հանրային շահին: Գործարարների եւ քաղաքացիների գործունեության կարգավորմանն ուղղված թույլտվությունների տրամադրման համար սահմանելու ենք նվազագույն կարճ ժամկետ: Կառավարության յուրաքանչյուր որոշում նախքան դրա կիրարկումը անցնելու է «կարգավորման ազդեցության գնահատում»:
2. կրճատելու ենք էլեկտրականության, գազի, ջրի միացման գործընթացների տեւողությունը եւ պահանջվող գործողությունների քանակը՝ դրանց իրականացումը կազմակերպելով «մեկ պատուհանի սկզբունքով»: Սեփականատիրոջ փոփոխության դեպքում էլեկտրականության, գազի, ջրի պայմանագրերի անվանափոխությունն իրականացվելու է ավտոմատ կարգով՝ առանց ավելորդ քաշքշուքի եւ ժամանակի վատնման:
3. քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման ամբողջական ցիկլն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառելով դիմումատու-պետական ծառայող շփումը:
4. մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մասին օրենսդրության կատարելագործմամբ նպաստելու ենք մտավոր գործունեության արդյունքի առեւտրայնացմանը (հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտի) եւ Հայաստանի իրավապայմանագրային համբավի բարելավմանը:
5. հարկային քաղաքականությամբ թիրախավորելու ենք գործարարի եւ ներդրողի համար արդար, ընկալելի եւ կանխատեսելի միջավայրի ստեղծում եւ գլոբալ աշխարհում երկրի մրցունակության եւ ներդրումային գրավչության բարձրացում:
6. բարենպաստ ներդրումային միջավայր ձեւավորելու համար նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի եւ շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը: Մասնավորապես՝ շահութահարկի գործող 20% դրույքաչափը իջեցնելու ենք՝ հասցնելով այն 18%-ի, ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների շահաբաժիններն այսուհետ հարկվելու են միասնական 5% դրույքաչափով: 2019 թվականից կսահմանվի եկամտային հարկի համահարթ 23% դրույքաչափ, ապա մինչեւ 2023 թվականը այն աստիճանաբար կնվազի մինչեւ 20%:

7. արդարացի հարկման նպատակով ձեռնարկելու ենք քայլեր հարկային բեռը դեպի «վճարունակ հարկատուներ» տեղափոխելու ուղղությամբ, մասնավորապես՝ գույքահարկը հաշվարկելու ենք անշարժ գույքի շուկայական արժեքից եւ անցում ենք կատարելու մեկ անձի սեփականության մեջ գտնվող գույքային միավորների կոնսոլիդացված արժեքի հարկման:
8. լրամշակելու ենք «Շքեղության հարկի մասին օրենքը», ընդլայնելու եւ հանրայնացնելու ենք շքեղության հարկի օբյեկտ եւ շքեղության հարկ վճարողների ցանկը՝ հավաքագրումների եւ բաշխումների նկատմամբ սահմանելով հանրային հսկողության առցանց գործիքակազմ՝ ուղղված սոցիալական արդարության վերականգնմանը:
9. միջազգային առեւտրատնտեսական հարաբերություններն առարկայական դարձնելու նպատակով վերանայելու եւ ընդլայնելու ենք կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի ցանկը, տրանսֆերային գնագոյացման կարգավորումներին վերաբերող եւ հարկման նպատակով տեղեկատվության փոխանակման համակարգերի ներդրմամբ ապահովելու ենք երկրի ներսում ձեւավորվող հարկման բազաների պաշտպանությունը:
10. հասցեական հարկային քաղաքականությամբ եւ տարբերակված մոտեցումների կիրառմամբ նպաստելու ենք Երեւանից դուրս՝ հատկապես սահմանամերձ գոտիներում գործարար համայնքի կայացմանը: Ներդնելու ենք գոտիական հարկման այնպիսի համակարգ, որի պայմաններում կկիրառվեն ավելացված արժեքի հարկի, հողի հարկի արտոնություններ, ինչպես նաեւ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի տարբերակված սակագներ, ինչն էլ ՀՀ տարածքում կնպաստի սահմանամերձ համայնքներում աշխատատեղերի ստեղծման կամ շարունակական ավելացման ուղղված հասցեական ներդրումային ծրագրերի իրականացմանը:
11. հարկային օրենսգրքի բարելավմամբ սահմանելու ենք ընկալելի եւ կանխատեսելի հարկային կանոններ, որոնք ներդրումային ծրագրերի, ծախսերի եւ եկամուտների տնօրինման գործընթացներում նպաստելու են արդյունավետ որոշումների կայացմանը:
12. յուրաքանչյուր տնտեսվարողի հնարավորություն ենք տալու մասնակիորեն որոշելու իր կողմից վճարված հարկի ծախսման ուղղությունը: Այսպիսով արմատավորելու ենք հարկային պարտավորությունները կամավորության սկզբունքով կատարելու պրակտիկան: Հարկային պարտավորությունները բարեխղճորեն կատարող, օրինապահ հարկ վճարողների խրախուսման ճանապարհով ապահովելու ենք բոլոր գործարքների լիարժեք փաստաթղթավորում:
13. մաքսային վարչարարության պարզեցմամբ սահմանելու ենք միջազգային առեւտրային հոսքերի գրավիչ պայմաններ: Էլեկտրոնային կամ ազդարարման այլ հարթակների կիրառմամբ գործարար համայնքին մշտապես իրազեկելու ենք բարեփոխումների բովանդակության եւ Հայաստանի մրցակցային առավելությունների (այդ թվում՝ մարզերում գործունեության իրականացման արտոնությունների) վերաբերյալ: Ներդրումային գրավչության բարձրացման նպատակով հնարավորինս պարզեցնելու ենք մաքսային սահմանի անցման գործընթացը եւ նվազեցնելու ենք սահմանի անցման համար պահանջվող ժամանակը: Գույքագրելու ենք գործարարների շրջանում մեծ պահանջարկ ունեցող ծառայությունները եւ դրանց համար սահմանելու ենք մատուցման արագացված ընթացակարգեր:
14. մաքսային ոլորտում «հսկիչ գներից» անցում ենք կատարելու հաշիվ ապրանքագրերով կամ տվյալ ապրանքի գների մասին համացանցում առկա տեղեկատվության հիման վրա մաքսազերծմանը:
15. բարելավելու ենք Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարողությունները:
16. մշակելու եւ ներդնելու ենք տնտեսական զարգացման սեփական ինդեքսը: Ապահովելու ենք միջազգային գնահատման վարկանիշային (այդ թվում թվային տնտեսության, թվայնացման, էլեկտրոնային հասարակության) սանդղակներում

Հայաստանի դիրքի շարունակական առաջընթացը՝ որպես թիրախ սահմանելով զգալի բարելավում «Գործարարությամբ զբաղվելը», «Գլոբալ մրցունակության» եւ այլ զեկույցներում:

17. «Մեկ կանգառ, մեկ պատուհան» կառույցի գործարկմամբ ապահովելու ենք մեկ կետից ներդրողներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը եւ հանրային ծառայությունների մատուցումը:
18. մշտադիտարկելու ենք ներդրումային ծրագրերը եւ բացահայտված խնդիրների օպերատիվ լուծմամբ սահմանելու ենք հետներդրումային սպասարկման պատասխանատու վարքագծի եւ գործընկերային հարաբերությունների բարձր նշաձող:
19. ՓՄՁ ոլորտում առկա խոչընդոտների գույքագրմամբ, գործարար եւ մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ սահմանելու ենք ՓՄՁ ոլորտում գործունեություն ծավալելու գրավիչ պայմաններ, մասնավորապես՝ տարեկան մինչեւ 20 միլիոն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսն ազատելով հարկերից՝ խրախուսելու ենք նոր փոքր եւ միջին բիզնեսի ստեղծումը:
20. նպաստելու ենք ՓՄՁ զարգացմանը եւ ընձեռելու ենք բոլոր հնարավորությունները, որպեսզի փոքր ձեռնարկությունը ձգտի եւ միաժամանակ կարողանա դառնալ միջին, իսկ միջինը՝ մեծ: Այդ նպատակին հասնելու համար մենք ստեղծելու ենք ոչ միայն հարկային գրավիչ պայմաններ, այլեւ գործարար եւ մասնագիտական համայնքի հետ ակտիվ երկխոսությամբ մշակելու ենք ՓՄՁ եւ ձեռներեցության զարգացմանն ուղղված միջոցառումների փաթեթ:

7. Հասանելի եւ հուսալի ենթակառուցվածքների զարգացում

Ոլորտի զարգացման քաղաքականությունն ուղղված է լինելու ՀՀ ողջ տարածքում ենթակառուցվածքների եւ մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, հասանելիության եւ մատչելիության մեծացմանը, համացանցի որակի եւ տարածվածության ապահովմանը:

1. Ներդնելու ենք ճանապարհաշինական աշխատանքների որակի ապահովման միջազգային ստանդարտներին համապատասխանող համակարգ, ճանապարհների պահպանման եւ ընթացիկ շահագործման ավտոմատ հսկողական համակարգ:
2. Ներդնելու ենք ուղեւորափոխադրումների կառավարման էլեկտրոնային համակարգ եւ համացանցով ապահովելու ենք մեկնարկային/ժամանման ժամանակացույցի հասանելիությունը բոլոր քաղաքներում:
3. Ապահովելու ենք համայնքների բնակչության ազատ տեղաշարժվելու իրավունքը եւ աշխատուժի մոբիլությունը՝ մատչելի, միասնական, տարվա բոլոր եղանակներին հասանելի երթուղային ցանցի ներդրմամբ (միջմարզային, ներմարզային, դեպի Երեւան եւ արտադրական կենտրոնները հյուսիսային եւ հարավային սահմանին կապող):

4. Հիմնական շեշտադրումն ուղղելու ենք առավել ինտենսիվ օգտագործվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման վրա: Մենք հատուկ ուշադրություն ենք հատկացնելու ճանապարհների պահպանմանը եւ ընթացիկ շահագործմանը, որը թույլ կտա հետագայում խնայել պետական միջոցները:
5. Առաջնային է լինելու դեպի արտադրական կենտրոններ տանող մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների բարեկարգումը: 2023 թվականին մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների 70 եւ ավելի տոկոսը լինելու է բարեկարգ վիճակում:
6. Տեղական ճանապարհների 40 եւ ավելի տոկոսը լինելու է բարեկարգված: Ամեն մի բնակավայր ունենալու է առնվազն մեկ՝ տարվա բոլոր եղանակներին անցանելի եւ անվտանգ ճանապարհ, որը իրեն կմիացնի այլ կենտրոնների հետ:
7. 2023 թվականին հանրապետության համայնքների մոտ 70 տոկոսը ունենալու է կենտրոնական ճանապարհային ցանցին միացնող առնվազն մեկ լավ վիճակում գտնվող ճանապարհ:
8. Աշխատուժի մոբիլության բարձրացման եւ համայնքների բնակչության ազատ տեղաշարժվելու իրավունքն ապահովելու նպատակով գործարկելու ենք մատչելի, միասնական երթուղային ցանց՝ միջհամայնքային ուղեւորափոխադրումների համակարգ, որը սպասարկելու է մարզի (մարզերի) միջմարզային եւ ներմարզային երթուղիները համատեղ:
9. Անվտանգ երթեւեկություն ապահովելու նպատակով՝ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների համար նախատեսված տուգանքների համակարգը բարեփոխելու ենք, տուգանքների առավելագույն չափերը նվազեցնելու ենք, ներդնելու ենք վարորդի վարքագծի գնահատման համակարգ, որը «վճարիր եւ խախտիր» սկզբունքի փոխարեն կիրառելու է առավել վտանգավոր կարգազանց վարորդներին վարորդական իրավունքից զրկելու սկզբունքը:
10. Բազմազանեցնելու ենք արտաքին աշխարհին կապող ցամաքային, օդային ուղիները: Մշակելու ենք ՀՀ աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները հաշվի առնող՝ քաղաքացիական ավիացիայի նոր ռազմավարություն, որի շնորհիվ կամրապնդենք ավիաընկերություններին ակտիվորեն ներգրավելու, ինչպես նաեւ նոր երթուղիների ընդլայնման, առկա երթուղիների հաճախականության ավելացման եւ գների նվազեցման ապահովման մեխանիզմները: 2022 թվականին գործարկելու ենք տարեկան 4 մլն մարդ սպասարկման հզորությամբ օդանավակայան:
11. Ապահովելու ենք լայնաշերտ համացանցի առկայությունը եւ հասանելիությունը ՀՀ բոլոր համայնքներում:
12. Իրականացնելու ենք ՀՀ ողջ տարածքի շուրջօրյա ռադիոմոնիթորինգ՝ արդյունքում պարզելով ՀՀ-ում մատուցվող ծառայությունների որակը ըստ տեխնոլոգիաների (3G,4G,4G+(LTE advanced) եւ այլն) եւ տարածքների: Համակարգի ներդրումից հետո հաճախականային սպեկտրի հսկումը լինելու է շատ ավելի արդյունավետ, ինչը կհագեցնի կապի ծառայությունների որակի բարելավմանը եւ խնդիրների ժամանակին բացահայտմանը:
13. Օգտագործելու ենք Հայաստանի հարաբերական բոլոր առավելությունները՝ դառնալու տվյալների տարանցիկ ծառայություններ տրամադրող կենտրոն: Կառավարությունը օգտագործելու է իր բոլոր միջոցները արդեն իսկ գործող տարանցիկ կապուղիներին նորերը ավելացնելու եւ նրանց թողունակությունը բարձրացնելու համար:

Ոլորտային քաղաքականություններ

Բարձր տեխնոլոգիաներ

Մուտք միջազգային շուկաներ
Նոր տեխնոպարկեր
Ֆինանսավորման նոր մեխանիզմներ
«ՏՏ գյուղ» ծրագիր

Գյուղատնտեսություն

Ոռոգում
Կոոպերատիվներ
Ռիսկերի կառավարում
Ապահովագրություն

Զբոսաշրջություն

Տուրպրոդուկտի բազմազանեցում
Ենթակառուցվածքներ
Տեղեկատվական արշավներ

8. Էներգետիկ բնագավառ

1. Զարգացման հնարավոր բոլոր սցենարների դիտարկմամբ մշակելու ենք Հայաստանի էլեկտրաէներգետիկ բնագավառի 2019-2035 թթ. ռազմավարական հեռանկարային ծրագիրը:
2. Ապահովելու ենք վերականգնվող էներգետիկ համակարգերի շարունակական ընդլայնում եւ իրականացնելու ենք էներգախնայողության պրոգրեսիվ միջոցառումներ:
3. Ոլորտը կարգավորող գործիքակազմն աստիճանաբար փոխարինելու ենք գնագոյացման շուկայական մեխանիզմով: Պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմամբ ներկայումս պետության կողմից իրականացվող գործառույթները պատվիրակելու ենք ոլորտի առաջատար ընկերություններին:
4. Համակարգային նշանակության նոր արտադրական հզորությունների կառուցման ծրագրերն իրականացնելու ենք բացառապես մրցութային եղանակով:
5. Մշակելու եւ իրագործելու ենք հարեւան երկրների հետ էլեկտրաէներգիայի առեւտրի նոր մեխանիզմների ներդրման հայեցակարգը: Էներգետիկ անկախության եւ անվտանգության բարձրացման նպատակով ընդլայնելու ենք Վրաստանի եւ Իրանի հետ փոխգործակցության շրջանակը՝ հատկապես խթանելով ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված տնտեսապես շահավետ ծրագրերի իրականացումը:

9. Բարձր տեխնոլոգիաների զարգացում

Հայաստանում շարունակվում է հեղափոխական տեմպերով զարգանալ բարձր տեխնոլոգիաների ոլորտը:
ՏՏ ոլորտում մենք նախատեսում ենք՝

1. Պետական ծրագրերով աջակցելու ենք առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմանն ու կիրառմանն արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության եւ այլ ոլորտներում: Միաժամանակ Հայաստանի նորարարական զարգացման հենասյունը կրթված եւ ազատ քաղաքացին է, ուստի նորարական զարգացումը սկիզբ է առնելու յուրաքանչյուր քաղաքացու վաղ տարիքից:
2. Խթանելու ենք հայկական ՏՏ, ՏՀՏ, բարձր տեխնոլոգիական արտադրանքի մրցունակ բրենդի ձեւավորումը եւ ապահովելու ենք միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանքի պատշաճ ներկայացումը:
3. Զարգացնելու ենք Հայաստանի մարզերում առկա ենթակառուցվածքների հիմքով ժամանակակից հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեությունը եւ ձեռնարկելու ենք միջոցներ մարզերում նոր կենտրոնների ստեղծման ուղությամբ:

4. Նպաստելու ենք վերազգային ՏՏ, ՏՀՏ, բարձր տեխնոլոգիական ընկերությունների մուտքին Հայաստան՝ հիմնելու բարձր տեխնոլոգիական գիտահետազոտական-արտադրական եւ կրթական կենտրոններ:
5. Իրականացնելու ենք ոլորտի զարգացմանը եւ ներդրումների ներգրավմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներ, միջազգային փորձի հիման վրա իրավական դաշտի կատարելագործում:
6. Զարգացնելու ենք ֆինանսական եւ տնտեսական խթանների տրամադրման մեխանիզմները, այդ թվում՝ դրամաշնորհային, տարբերակված ֆինանսական եւ տնտեսական խթանիչները, վենչուրային եւ ներդրումային ֆոնդերը:
7. Նպաստելու ենք «ՏՏ գյուղ» ծրագրի իրականացմանը՝ Հայաստանը միջազգային ՏՏ մասնագետների համար ցանկալի ապրելու վայր դարձնելու նպատակով:

10. Գյուղատնտեսություն

Մեր նպատակն է ստեղծել նորարար տեխնոլոգիաների եւ գիտական հենքի վրա հիմնված մրցունակ եւ արդյունավետ գյուղատնտեսություն.

1. մշակելու ենք ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն եւ իրականացնելու ենք ոռոգման համակարգերի արդիականացման պետական աջակցության ծրագրեր:
2. ընդլայնելու ենք վարելահողերի նպատակային օգտագործման ծավալները եւ ոռոգելի հողատարածքները, ստեղծելու ենք չօգտագործվող հողերը գյուղացիական տնտեսությունների կողմից շրջանառության մեջ ներգրավելու տնտեսական եւ իրավական հնարավորություններ:
3. բարձրացնելու ենք սուբսիդավորման մեխանիզմների հասցեականությունը՝ ապահովելով շահառու համայնքների կարիքների բավարարման հստակ մեխանիզմներ:
4. օժանդակելու ենք կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը եւ սահմանելու ենք կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ:
5. ստեղծելու ենք կրթական-գիտահետազոտական-արդյունաբերական կլաստերներ եւ նպաստելու ենք գյուղատնտեսության նախարարություն, ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաարտադրական եւ խորհրդատվական կենտրոնների համագործակցության խորացմանը:
6. աջակցելու ենք ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաեւ սննդի անվտանգության համակարգերի ներդրմանը:
7. ներդնելու ենք գյուղատնտեսության ապահովագրական համակարգ:
8. աջակցելու ենք հակակարկտային ցանցերի ներդրմանը:

9. իրականացնելու ենք տեղական սերմնաբուծության եւ սերմնարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության, անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրեր: Աջակցելու ենք տոհմաբուծարանների ստեղծմանը:
10. նպաստելու ենք գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը եւ ագրոտուրիզմի զարգացմանը:

11. Զբոսաշրջության զարգացում

1. Զբոսաշրջության ոլորտում բարենպաստ գործարար եւ ներդրումային միջավայր ձեւավորելու, ինչպես նաեւ ծառայությունների որակը բարելավելու նպատակով մշակելու եւ ընդունելու ենք Զբոսաշրջության մասին նոր օրենք եւ դրանից բխող ենթաօրենսդրական եւ իրավական ակտեր:
2. Հայաստանում զբոսաշրջիկի փորձառությունը բարելավելու նպատակով իրականացնելու ենք համալիր միջոցառումներ, այդ թվում՝ ենթակառուցվածքների զարգացում, մարդկային ռեսուրսի զարգացում, տուրպրոդուկտի դիվերսիֆիկացում եւ տեղեկատվության հասանելիության բարձրացում նաեւ Հայաստանի զբոսաշրջային առաջարկի թվայնացման միջոցով:
3. Դեպի Հայաստան զբոսաշրջիկների հոսքը մեծացնելու նպատակով իրականացնելու ենք ժամանակակից գործիքների կիրառմամբ ակտիվ մարքեթինգային միջոցառումներ՝ սկսելով Հայաստանի զբոսաշրջային բրենդի մշակումից եւ թիրախային շուկաներում դրա առաջխաղացմանն ուղեկցող արշավների իրականացումից:
4. Հայաստանի հասանելիությունը համաշխարհային զբոսաշրջային շուկայում բարձրացնելու նպատակով բազմազանեցնելու ենք եւ առավել մատչելի ենք դարձնելու դեպի Հայաստան օդային եւ ցամաքային ուղիները եւ դյուրացնելու ենք Հայաստան մուտքի վիզային ռեժիմը:

Խելացի, առողջ եւ սոցիալապես պաշտպանված հասարակություն

Ներառական, մրցունակ կրթություն և զարգացած գիտություն

Ծրագրերի արդիականացում

Հասանելիության բարձրացում

Նախադպրոցական կրթություն

>70% ներառում

Հանրակրթություն

STEM
Լեզուներ
Ուսուցիչներ

ՄԿՈՒ

Դուալ կրթություն
Մարզային ընդգրկում

Բարձրագույն կրթություն

ֆինանսավորում
PhD

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ

12. Ներառական, մրցունակ կրթական համակարգ եւ զարգացած գիտություն

Մեզ համար գերակա նպատակ ենք սահմանելու կրթության եւ գիտության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության: Դպրոցները դառնալու են համայնքային զարգացման կենտրոններ՝ նպաստելով համայնքի սոցիալ-մշակութային կյանքի վերածննդին եւ ծառայությունների ցանցի ընդլայնմանը: Կրթօջախները Հայաստանում լինելու են ազատ ստեղծագործման կենտրոններ: Այստեղ է ծնվելու եւ զարգանալու իրավական եւ տնտեսական ոլորտը նորարարությամբ լցնող ուժը:

Կրթության ոլորտի մեր տեսլականը միտված է պատասխանելու հետեւյալ հարցերին՝ ի՞նչ գիտելիք, հմտություններ եւ անձնային հատկանիշներ են անհրաժեշտ առաջիկա տասնամյակներում հաջողակ լինելու եւ դրանք իրացնելու համար, եւ ինչպե՞ս կարող է պետությունը բարեփոխել կրթական համակարգը, որպեսզի նպաստի այդ հմտությունների եւ կարողությունների ձեւավորմանը:

Կրթության եւ գիտության պետական ֆինանսավորումը սերտորեն կապակցելու ենք պետության զարգացման ռազմավարությանը եւ գերակայություններին: Մեզ համար առանցքային են սովորողների ճանաչողական, անձնային եւ միջանձնային հմտությունների զարգացումը, ուսուցիչների կարողությունների զարգացումը եւ մասնագիտության հեղինակության բարձրացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը, ինչպես նաեւ կրթություն-գիտություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը:

Մասնավորապես՝

1. ապահովելու ենք նախադպրոցական կրթության որակի եւ հասանելիության բարձրացում՝ կարեւորելով վաղ մանկության զարգացման դերը անհատի սոցիալ-մշակութային ինքնության ձեւավորման գործում: Այս ուղղությամբ համայնքային իշխանությունների հետ համագործակցության միջոցով բարելավելու ենք նախադպրոցական կրթական հաստատությունների պայմանները, միջազգային լավագույն փորձի եւ բացահայտված կարիքների հիման վրա մշակելու ենք ուսումնական ծրագիր եւ գիտամեթոդական ուղեցույց: Քայլեր ենք ձեռնարկելու նախադպրոցական կրթությունը կրթական ֆորմալ համակարգի պարտադիր բաղադրիչ դարձնելու ուղղությամբ: Մեր թիրախն է մինչեւ 2023 թվականը ապահովել 3 տարեկանից բարձր երեխաների 70%-ի ներգրավումը նախադպրոցական ուսումնական հաստատություններում:
2. կրթության ոլորտի առաջնահերթություն ենք սահմանելու հանրակրթության զարգացումը, որը ծառայելու է անձնային զարգացմանը, սոցիալական ինտեգրմանը, ակտիվ եւ պատասխանատու քաղաքացու ձեւավորմանը եւ աշխատաշուկայում հեշտորեն ինտեգրվելու նպատակին: Առաջին քայլով վերանայելու եւ արդիականացնելու ենք ուսումնական ծրագրերը՝ բացառելով տեղեկատվության արհեստական վերարտադրումը եւ շեշտադրումը կատարելով վերլուծական եւ ստեղծագործական հմտությունների զարգացման վրա: Ապահովելու ենք ներառական կրթության ներդրման եւ իրականացման նոր որակ՝ կարեւորելով ներառման միջոցով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացումը: Թիրախավորելու ենք հատկապես տեխնիկական գիտությունները՝ STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) գիտակարգերի եւ օտար լեզուների խորացված ուսուցումը դեռեւս առաջին դասարանից. երեք օտար լեզուների տիրապետող

քաղաքացին պետք է դառնա սովորական երեւույթ մեր իրականության համար: Մեծ ուշադրություն ենք դարձնելու քաղաքացիական, ֆինանսական ու ձեռնարկատիրական կրթությանը եւ մեդիագրագիտության զարգացմանը: Ոլորտի զարգացումը գնահատելու համար Հայաստանը ներառելու ենք «The Programme for International Student Assessment» վարկանիշում:

3. մեր ուշադրության թիրախում է լինելու ուսուցիչների մասնագիտական գիտելիքի եւ հմտությունների պարբերական զարգացումը եւ ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացումը: Մշակելու ենք մանկավարժական կրթության, ինչպես նաեւ ուսուցիչների վերապատրաստման նոր ձեւաչափեր եւ այդ դասընթացների արդյունավետության գնահատման ու վերապատրաստված ուսուցիչների խրախուսման մեխանիզմներ: Ապահովելու ենք ուսուցչի աշխատավարձի աստիճանական բարձրացում եւ մի շարք արտոնությունների տրամադրում՝ այդ թվում ընդլայնելով սոցիալական փաթեթներով առաջարկվող ծառայությունները: Մեր թիրախն է ուսուցչի մասնագիտության պահանջարկի եւ հեղինակության մեծացումը հանրապետությունում:
4. բարձրացնելու ենք նախնական եւ միջին մասնագիտական կրթական հաստատությունների որակը եւ ընդլայնելու ենք դրանց մարզային ընդգրկումը՝ ուշադրություն դարձնելով մարզի գերակայություններին եւ տնտեսական մասնագիտացմանը: Մասնավորի հետ համագործակցությամբ՝ մշակելու ենք դուալ կրթության ներդրման ձեւաչափեր:
5. բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու հատկապես համալսարանների կրթական ծրագրերի արդիականացմանը եւ բուհերը գիտության ու նորարարության կենտրոն դարձնելուն, որտեղ կկարեւորվի բուհի ինքնավարությունը, ակադեմիական ազատությունները եւ բուհի՝ հասարակական եւ գիտական արժեք ստեղծելու մանդատը: Համալսարաններին պատվիրակելու ենք պետության համար առաջնահերթ համարվող մի շարք հետազոտությունների իրականացումը, ինչը նաեւ տանելու է համալսարանների գիտահետազոտական կարողությունների զարգացմանը: Վերանայելու ենք բուհերին տրամադրվող ֆինանսական միջոցների կառուցվածքը եւ թիրախայնությունը՝ մշակելով ֆինանսավորման մրցակցային մոդել եւ արդյունքում մեծացնելով պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը: Մեծացնելու ենք ուսանողների շարժունակությունը եւ ապահովելու ենք բարձրագույն կրթության ոլորտում անցումը երրորդ աստիճանին (PhD): Բարձրագույն կրթության հասանելիությունը մեծացնելու ուղղությամբ ձեռնարկելու ենք միջոցառումներ, որոնք բարձրացնելու են ուսանողների համար ֆինանսների հասանելիությունը պետության համար առաջնահերթ ոլորտներում: Ոլորտի զարգացումը գնահատելու ենք ինչպես միջազգային ուսանողների թվաքանակի ավելացմամբ, այնպես էլ բուհերն ավարտած ուսանողների՝ աշխատաշուկայում ինտեգրմամբ:
6. կրթության եւ գիտության զարգացումը անմիջականորեն շաղկապելու ենք պետության զարգացման ռազմավարական նպատակների հետ: Մեզ համար թիրախային է կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը: Խնդրի լուծման համար առաջին հերթին ուսումնասիրելու ենք աշխատաշուկայի զարգացման միտումները՝ ըստ այդմ փորձելով համադրել առաջարկն ու պահանջարկը՝ լուծելով գերկրթվածության եւ թերզբաղվածության խնդիրը: Այդ նպատակով միջին դպրոցում ներդնելու ենք մասնագիտական կողմնորոշման մոդուլներ, խմբակներ, իսկ 11-րդ դասարանի երկրորդ կիսամյակում ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպելու ենք երկշաբաթյա մասնագիտական պրակտիկա, ինչպես նաեւ ավարտական դասարաններում տրամադրելու ենք ամբողջական տեղեկատվություն առկա մասնագիտությունների պահանջարկի,

կարիերայի զարգացման հնարավորությունների, աշխատավարձի մասին՝ ապահովելով աշակերտների տեղեկացված որոշումների կայացումը:

Կրթության եւ գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձեւավորման հրամայականը պահանջում է թիրախավորել գիտության զարգացումը, գիտության ոլորտում տասնամյակներով կուտակված հիմնախնդիրների լուծումը, համակարգային բարեփոխումների իրականացումը եւ վերջնարդյունքում՝ ազգային ինովացիոն համակարգի զարգացման նախադրյալների ձեւավորումը: Գիտության զարգացման ուղղությամբ առաջարկում ենք հետեւյալ բարեփոխումները.

1. աջակցելու ենք Հայաստանի համար գերակա ճանաչված գիտական ուղղություններում հիմնարար եւ կիրառական հետազոտությունների իրականացմանը:
2. իրականացնելու ենք գիտության համակարգի կառուցվածքային բարեփոխում՝ անցում կատարելով գիտական գործունեության կազմակերպման արդիական, առավել ճկուն եւ ինտեգրացիոն ակտիվություն ենթադրող մոդելներին:
3. մշակելու եւ ներդնելու ենք շահադրդման եւ սոցիալական երաշխիքների ճկուն համակարգ, ինչը կնպաստի հանրային հարաբերություններում գիտական գործունեության հեղինակության բարձրացմանը, գիտական հաստատություններում երիտասարդ կադրերի ներհոսքին, կզսպի գիտական կադրերի արտահոսքը:
4. սերտացնելու ենք կրթություն-գիտություն-տնտեսություն կապը: Այս երեք ոլորտներում արդյունավետ փոխգործակցության համար նոր ձեւաչափեր ենք կիրառելու, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության եւ այլ սկզբունքների ակտիվ կիրառության հիման վրա:
5. աջակցելու ենք գիտական արդյունքի առեւտրայնացմանը՝ միջազգային պրակտիկայում լայն կիրառություն ունեցող ինստիտուցիոնալ միավորների ձեւավորման միջոցով:
6. զարգացնելու ենք վենչուրային ձեռնարկատիրությունը, վենչուրային հիմնադրամների գործունեությունը՝ նաեւ դրանց ձեւավորման սկզբնական շրջանում պետության համամասնակցության գործիքի կիրառմամբ:
7. ապահովելու ենք գիտական գործունեության բյուջետային ֆինանսավորման ծավալների շարունակական ավելացում, նախադրյալներ ենք ստեղծելու գիտական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար:
8. քայլեր ենք ձեռնարկելու տարածաշրջանային եւ միջազգային գիտական համագործակցության ակտիվացման ուղղությամբ:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար նախատեսում ենք կրթության եւ գիտության պետական ֆինանսավորման բարձրացում, ինչպես նաեւ մասնավոր միջոցների ներգավում:

13. Հասանելի եւ որակյալ առողջապահություն

Մարդու կենսագործունեության արժանապատիվ պայմանների ստեղծումը հռչակելով իբրեւ մեր քաղաքականության առանցքային նպատակ՝ առաջնային ենք համարելու հատկապես առողջապահության համակարգի կողմից տրամադրվող ծառայությունների որակի եւ հասանելիության բարելավումը: Այսուհետ առողջության պահպանումը չի լինելու շքեղություն, այլ դառնալու է հասանելի յուրաքանչյուրիս:



Ոլորտի զարգացման նպատակով ձեռնարկելու ենք հետեւյալ քայլերը.

1. առողջապահության բնագավառում մեզ համար առաջնային է լինելու առողջապահական ծառայությունների համընդհանուր ծածկույթի ապահովումը: Մինչեւ 2023 թվականը մենք գերակայություն ենք տալու հատկապես առողջության առաջնային պահպանման ծառայությունների որակի եւ հասանելիության բարձրացմանը: Ուշադրություն ենք սեւեռելու մայրական եւ մանկական առողջության պահպանման, վերարտադրողական առողջության եւ դեռահասների առողջության բարելավման վրա, ինչը դրական ազդեցություն կունենա ծնելիության եւ հետեւաբար բնակչության բնական աճի վրա: Մենք ձգտելու ենք, որ մեր երեխաները ծնվեն առողջ եւ պահպանեն իրենց առողջությունն ամբողջ կյանքի ընթացքում:
2. ներդնելու ենք համընդհանուր բժշկական ապահովագրության այնպիսի համակարգ, որն ապահովելու է անհետաձգելի բժշկական օգնության եւ բժշկական սպասարկման անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացու պատշաճ եւ ժամանակին սպասարկումը: Բժշկական օգնության ստանալու պահին յուրաքանչյուր անձ պետք է ապահովագրված լինի աղետալի ծախսերի կատարման ռիսկից: Արդյունքում բարելավելու ենք բժշկական օգնության եւ սպասարկման որակը, երաշխավորելու ենք բժշկական ծառայությունների փաթեթի հասանելիությունն այն անձանց համար, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն դրանք ստանալ, նպաստելու ենք ոլորտում ստվերային գործընթացների կրճատմանը եւ մրցունակության բարձրացմանը՝ ներդնելով առողջապահական բյուջեի բաշխման եւ ծախսման անաչառ համակարգ: Մինչեւ 2023 թվականն արդեն ունենալու ենք առողջապահական ապահովագրության ներդրված համակարգ:
3. առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավումը բուժաշխատողների աշխատավարձերի բարձրացման, նրանց շարունակական մասնագիտական կրթության, բժշկական կազմակերպությունների սարքավորումներով վերազինման եւ սկրինինգային հետազոտությունների ընդլայնման միջոցով հնարավորություն է տալու զարգացնել հիվանդությունների կանխարգելումը եւ ուժեղացնել դրանց վաղ հայտնաբերումը, ինչի շնորհիվ նվազելու է սիրտ-անոթային հիվանդություններով, քաղցկեղով եւ շաքարային դիաբետով պայմանավորված հիվանդացությունը եւ դրանցից վաղաժամ մահացությունը, ինչպես նաեւ հաշմանդամության առաջացումը: Հիվանդացության եւ մահացության նվազեցումը նշված ոչ վարակիչ հիվանդություններից նպաստելու է մարդկանց կյանքի որակի բարելավմանը եւ առողջ ծերացմանը, միաժամանակ բերելու է երկրում տնտեսական աճի, ապահովվելու է ֆինանսական ռեսուրսների խնայողություն եւ արդյունավետ բաշխում:
4. բարելավելու ենք պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության հասցեականությունը՝ հիմքում դնելով հավասարության, սոցիալական արդարության եւ համերաշխության սկզբունքները: Առողջության իրավունքի ապահովումը գերակշռելու է որպես հիմնարար իրավունքների բաղկացուցիչ մաս:
5. մշակելու եւ իրականացնելու ենք մարզային առողջապահական ենթակառուցվածքների եւ մասնագիտական որակյալ ներուժի համաչափ բաշխման ծրագրեր՝ ուղղված մարզերում բուժաշխատողների աշխատանքի խրախուսմանը եւ մարզային ենթակառուցվածքների այլ կարողությունների զարգացմանը:
6. զարգացնելու ենք բուժաշխատողների մասնագիտական կարողությունները միջազգային ստանդարտներին համապատասխանող կլինիկական ուղեցույցների, ընթացակարգերի լայնամասշտաբ ներդրմամբ: Սահմանելու ենք բժշկական մասնագիտական էթիկայի նորմերը՝ որպես բժշկական ծառայությունների անբաժանելի մաս:

7. ներդնելու ենք դեղերի որակի, անվտանգության, արդյունավետության եւ նշանակման, բաշխման վերահսկողության արդյունավետ համակարգեր:
8. իրականացնելու ենք առողջ ապրելակերպի վարքագծի ձեւավորմանն ուղղված քարոզարշավներ, մշակելու ենք միջոցառումներ բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների առաջացմանը նպաստող ռիսկի գործոնների նվազեցման ուղղությամբ (անառողջ սնուցում, ծխախոտ, ալկոհոլ, ֆիզիկական թերակտիվություն եւ այլն):
9. էլեկտրոնային առողջապահության ամբողջական գործարկմամբ ապահովելու ենք քաղաքացիների բժշկական տվյալների հասանելիությունն իրենց իսկ առցանց հաշիվներում, ինչպես նաեւ ցանկացած բուժհիմնարկում՝ նվազեցնելով կրկնակի հետազոտությունների անհրաժեշտությունը եւ դրանց համար կատարվող ծախսերը: Համակարգը կբերի նաեւ միջոցների նպատակային, արդյունավետ եւ թափանցիկ բաշխմանը, ինչպես նաեւ առողջապահական ծառայությունների շուկայական եւ մրցակցային գնագոյացման մեխանիզմների ամրապնդմանը: Համակարգի ներդրումը նաեւ զարգացնելու է տվյալների վերլուծության վրա հիմնված բժշկությունը, ինչը հնարավորություն է տալու մեծացնելու ախտորոշման ճշգրտությունը:

Պետական բյուջեից առողջապահության ծախսերը վերը նշված պայմաններում առաջիկա երեք տարիներին կայունացնելու ենք ՀՆԱ-ի 2 տոկոսի, իսկ հինգ տարիներին՝ ՀՆԱ-ի 3 տոկոսի սահմաններում: Առողջապահության ֆինանսավորման աճը զուգակցվելու է ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման հետ:

14. Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ

Սոցիալական պաշտպանության կայուն համակարգի զարգացման առանցքն է լինելու մարդու հիմնարար իրավունքների իրացման համար համապատասխան պայմանների ստեղծումը, ինչպես նաեւ պետության ազգային անվտանգության սպառնալիք հանդիսացող խոչընդոտների վերացումը:

Մենք գիտակցում ենք, որ Հայաստանում առկա մի շարք հրատապ լուծում պահանջող խնդիրներ, այդ թվում՝ աղքատության բարձր մակարդակը, գործազրկության բարձր մակարդակը, ծնելիության ցածր ցուցանիշը, արտագաղթը եւ արդյունքում բնակչության թվի նվազումը, տարիներ շարունակ պայմանավորված են եղել խաթարված պետական ինստիտուտների աշխատանքով, պատճառների վերացմանն ուղղված թիրախային քաղաքականությունների բացակայությամբ եւ արդյունքում ձեւավորված մշակութային առանձնահատկություններով: Կոռումպացված համակարգը, խեղելով սոցիալական արդարության սկզբունքը, տարել է սոցիալական բեւեռվածության մեծացմանը:

Սոցիալական արդարությունը վերականգնելու, հասարակության բոլոր խմբերին վերաինտեգրելու եւ համերաշխ ու հոգատար հանրություն կերտելու ճանապարհին ապահովելու ենք մարդկանց համար հավասար հնարավորություններ, աղքատության մակարդակի իջեցում սոցիալական աջակցության համակարգի զարգացման, ժողովրդագրական եւ զբաղվածության արդյունավետ քաղաքականության մշակման եւ կենսաթոշակային համակարգի հետագա զարգացման միջոցով:

Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ

-Գործազուրկների հմտությունների զարգացում

-Մատչելի բնակարան երիտասարդներին

-Կենսաթոշակային բարեփոխումներ

Ծնելիության բարձրացում
Գործազրկության իջեցում 5%-ային նիշով
Աղքատության իջեցում 10%-ային նիշով

1. Ոլորտում մեզ համար գերակա է լինելու ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության վարումը, մասնավորապես՝ աշխատաշուկայի առաջարկի եւ պահանջարկի համապատասխանեցումը փաստերի վերլուծության հիման վրա մշակված ծրագրերի միջոցով, գործազուրկների հմտությունների եւ կարողությունների զարգացումը, աջակցությունն աշխատանքի որոնման աշխատանքներում եւ աշխատանքային նոր հնարավորությունների ստեղծումը: Զբաղվածության՝ մեր կողմից մշակված ծրագրերը միտված են լինելու ոչ թե ժամանակավոր ու ցածր որակավորում պահանջող աշխատանքով ապահովելուն, այլ մշտական ու կայուն աշխատանք գտնելուն ու աշխատաշուկայում վերաինտեգրվելուն: Ոլորտի քաղաքականության թիրախում են լինելու հատկապես գործազուրկ երիտասարդները, կանայք եւ աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխության պատճառով գործազուրկ մնացած ոչ բարձր որակավորում ունեցող աշխատուժը: Մինչեւ 2023 թվականը միջազգային լավագույն փորձի կիրառմամբ եւ փաստերի վերլուծության հիման վրա մշակելու ենք փաթեթային ծրագրեր, ինչը նաեւ ուղեկցվելու է Զբաղվածության պետական գործակալության բարեփոխմամբ: Կարեւորելու ենք նաեւ աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:
2. Քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ միասին մշակելու ենք թիրախային քաղաքականություն հատուկ կարիքներ ունեցող անձանց սոցիալական ինտեգրումն ապահովելու, հանրային օգտագործման շինությունները համապատասխան ձեւով կահավորելու, վերջիններիս համար խնամքի մասնագիտացված կենտրոններ ստեղծելու ուղղությամբ:
3. Առկա ժողովրդագրական բացասական միտումները մեղմելուն է միտված լինելու ընտանիքի նոր քաղաքականության մշակումը: Մասնավորապես՝ ծնելիության մակարդակը բարձրացնելու համար մշակելու ենք երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նախագծեր:
4. «Աղքատության որոգայթից» խուսափելու համար իրականացնելու ենք աղքատության պատճառների համապարփակ ուսումնասիրություն եւ ըստ այդմ մշակելու ենք համալիր գործողություններ: Բարեփոխելու ենք աղքատության նպաստների տրամադրման կարգը: Ըստ այդմ՝ նախատեսում ենք զբաղվածության քաղաքականության որոշ բաղադրիչներ պարտադիր դարձնել նպաստների գործազուրկ շահառուների համար:
5. Պետական համակարգում հնարավոր խնայողությունների ու եկամուտների նոր աղբյուրների շնորհիվ նախատեսում ենք մինչեւ 2023 թվականը կենսաթոշակների բարձրացում:
6. Բարեփոխումներ ենք իրականացնելու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում եւ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի՝ ակտիվների մեջ ներդրումներ կատարելու օրենսդրական կարգավորման մեջ, ինչի արդյունքում խրախուսվելու է ակտիվների ներդրումը Հայաստանի Հանրապետությունում:

Վերոնշյալ գործողությունները միտված են լինելու հանրապետությունում միջին խավի ձեւավորմանը: Մասնավորապես՝ մինչեւ 2023 թվականը աղքատությունը իջեցնելու ենք առնվազն 10 տոկոսային նիշով՝ վերացնելով ծայրահեղ աղքատությունը, գործազրկությունը՝ 5 տոկոսային նիշով:

15. Շրջակա միջավայրի համալիր պահպանում, վերականգնում եւ կայուն բնօգտագործում

Բնապահպանության ոլորտում մեր տեսլականը հիմնվում է շրջակա միջավայրի համալիր պահպանման, վերականգնման, բարելավման եւ ողջամիտ օգտագործման սկզբունքների վրա: Գիտակցելով մեր պատասխանատվությունը գալիք սերունդների ճակատագրի նկատմամբ՝ որդեգրելու ենք բնական ռեսուրսների գերշահագործման եւ ապօրինի օգտագործման բացառման, շրջակա միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու սկզբունքները:

Մենք ներդնելու ենք այնպիսի ժամանակակից գործիքներ, որոնք կբացառեն բնական ռեսուրսների գերշահագործումը, նվազագույնի կհասցվի շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա բացասական ազդեցությունը: Այդ նպատակին հասնելու համար ապահովելու ենք ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի մոտարկումը Եվրոպական միության դիրեկտիվներին:

Մենք իրականացնելու ենք շրջակա միջավայրի պաշտպանության հետեւյալ թիրախային ծրագրերը.

1. բնապահպանական եւ բնօգտագործման վճարներն ուղղելու ենք շրջակա միջավայրի պաշտպանության նորարարական այնպիսի նախաձեռնություններին, ինչպիսիք են ազդակիր համայնքում սոցիալ-տնտեսական նշանակության ծրագրերը՝ հատկապես կարեւորելով ազդակիր եւ հարակից համայնքներում աշխատատեղերի ավելացումը:
2. իրականացնելու ենք «պարտքը բնապահպանության դիմաց» համակարգի գործարկում, ինչի արդյունքում այն գումարների մի մասը, որը պետք է ծառայեր արտաքին պարտքի սպասարկմանը, ուղղվելու է բնապահպանական ծրագրերի՝ կենդանական, բուսական աշխարհի կամ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը եւ վերականգնմանը:
3. մշակելու ենք հանրապետությունում աղբի կառավարման համալիր ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր, ինչի արդյունքում մասնավոր հատվածի հետ համատեղ գործարկելու ենք առաջատար տեխնոլոգիաների կիրառմամբ թափոնների վերամշակման ծրագրեր:
4. ջրային ռեսուրսների պահպանումը, արդյունավետ օգտագործումը եւ որակի բարձրացումը դարձնելու ենք մեր գերակայություններից մեկը: Կառավարությունն իր գլխավոր խնդիրներից է հռչակելու ջրային ռեսուրսների կառավարման գերարդյունավետ համակարգի ներդրումը: Հայաստանը աշխարհի երկրների շարքում այսուհետ ընկալվելու է որպես ջրի երկիր, ջուրը դառնալու է Հայաստանի այցեքարտը միջազգային ասպարեզում:
5. Սեւանա լճի մակարդակի պահպանումը, աղտոտվածության նվազեցումը եւ ապա բարձրացումը գտնվելու է կառավարության ուշադրության կենտրոնում, ինչը նրա հարատեւության եւ կենսաբազմազանության ապահովման գրավականն է:
6. ընդերքօգտագործման ոլորտում առաջնորդվելու ենք բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման, ոլորտում թափանցիկության եւ հաշվետվողականության բարձրացման, ընդերքօգտագործումից առավելագույն ավելացված արժեքի ստացման եւ կայուն զարգացման սկզբունքներով, այդ թվում՝ շրջակա միջավայրին նվազագույն վնաս հասցնելու եւ գալիք սերունդների շահերի պաշտպանության միջոցով:
7. մշակելու ենք հանքարդյունաբերության՝ օրենսդրական դաշտի, ոլորտում արձանագրված խնդիրների, միջազգային լավագույն ստանդարտների վերլուծության վրա հիմնված ռազմավարություն, որի արդյունքում դրվելու են ոլորտի զարգացման ռազմավարական հիմքերն ու սկզբունքները, ինչպես նաեւ մշակելու ենք վերջիններից բխող օրենսդրական բարեփոխումներ:

8. ներդնելու ենք շրջակա միջավայրի միասնական մոնիթորինգի եւ վերահսկողության, թույլտվությունների, լիցենզիաների միասնական համակարգեր: Քայլեր ենք ձեռնարկելու բնական ռեսուրսների արդյունահանման ծավալների եւ հանքահումքային հենքի վերարտադրության տեմպերի միջեւ դիսբալանսի վերացման համար:
9. ապահովելու ենք հանքարդյունաբերական թափոնների կառավարման եւ շահագործված հանքերի փակման/ ռեկուլտիվացիայի ժամանակակից մեխանիզմների կիրառումը:
10. մեր քաղաքականությունը միտված է լինելու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը եւ վերամշակող հանքարդյունաբերության զարգացման խթանմանը, ինչը կապահովի հանքանյութերի մշակման ամբողջական ցիկլը եւ կստեղծի տնտեսական հավելյալ արժեք: Ուստի, նվազեցնելու ենք խտանյութի եւ չվերամշակված հումքի արտահանումը՝ այն փոխարինելով վերամշակված հանքանյութի արտահանմամբ:

Շրջակա միջավայրի համալիր պահպանում և կայուն բնօգտագործում

«Պարտք բնապահպանության դիմաց» համակարգ

Թափոնների վերամշակում

Կայուն և ռացիոնալ ընդերքօգտագործում

16. Ներառական մշակութային քաղաքականություն



Քաղաքացու երջանկության հնարավորության ապահովման կարեւորագույն գործոն է նրա մշտական հաղորդակցությունը մշակույթի եւ մշակութային կյանքի հետ: Ըստ այդմ՝ մեր մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու մշակութային կյանքին հանրային ակտիվ մասնակցությունն ապահովելուն, մշակութային միջոցառումների լայն քարոզչություն իրականացնելուն եւ դեպի մշակութային հաստատություններ քաղաքացիների հարաճուն հոսքին նպաստելուն:

Մշակութային քաղաքականությունը լինելու է ժողովրդավար: Այն է՝ մշակույթի բոլոր գործիչների եւ բոլոր արվեստագետների համար ապահովելու ենք հավասար պայմաններ ազատ ստեղծագործելու եւ այդ ստեղծագործություններն իրացնելու համար: Առանձնահատուկ հոգածության առարկա են լինելու ազգային փոքրամասնությունների, խոցելի եւ թերներկայացված խմբերի, սփյուռքում արտադրվող ստեղծագործությունների խրախուսումն ու տարածումը: Մշակութային քաղաքականությունը նաեւ ձգտելու է ապակենտրոնացման՝ թե՛ աշխարհագրական, թե՛ ինստիտուտների ինքնավարացման իմաստներով. մարզերում մշակույթը եւ արվեստները ունենանալու են զարգանալու եւ պահպանվելու նույնպիսի հնարավորություններ, ինչպիսին ունեն մայրաքաղաքում:

Պետությունը պատասխանատվություն է ստանձնելու թե՛ մշակութային ժառանգության պահպանության, թե՛ ժամանակակից ստեղծագործողների եւ մշակույթի համար ազատ, անկաշկանդ եւ նպաստավոր պայմանների ապահովման համար: Այս իմաստով մշակութային արժեքների եւ մշակութային ժառանգության չափանիշները վերանայելու եւ վերաիմաստավորելու անհրաժեշտություն կա՝ դրանք ավելի լայն, ավելի բովանդակային դարձնելու համար: Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դրանց տարբեր բաղադրիչների՝ հաստատությունների, շինությունների, կոթողների, հուշարձանների, արխիվների ուսումնասիրությանը, ոչ նյութական ժառանգությանը, դրանց պահպանման եւ կառավարման վերաբերյալ օրենսդրական դաշտի ձեւավորմանը եւ

զարգացմանը: Մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու մշակութային կյանքին հանրային ակտիվ մասնակցությունն ապահովելուն, մշակութային միջոցառումների լայն քարոզչություն իրականացնելուն եւ դեպի մշակութային հաստատություններ քաղաքացիների հարաճուն հոսքին նպաստելուն:

Պետական առանձնակի հոգածության առարկա պետք է լինի նաեւ քննադատական բովանդակությամբ արվեստի խրախուսումը: Պետությունը չպետք է պարտադրի կամ խրախուսի միայն օրվա իշխանությունների գաղափարախոսությանը սպասարկող մշակույթը: Արվեստը չպետք է լինի միագաղափարախոսական: Պետությունը պետք է հավասար պայմաններ ստեղծի, որպեսզի արվեստի ոլորտում ներկայացված լինեն հասարակությունը կազմող բոլոր շերտերը, ենթամշակույթները, թեմաները եւ բովանդակությունները, ինչը կապահովի մշակութային բազմազանությունն ու բազմաձայնությունը:

1. Մշակութային քաղաքականությունը դիտարկվելու է ոչ միայն մշակութային ժառանգության՝ իբրեւ ազգային ինքնության հիմքի պահպանման տեսանկյունից, այլեւ պետության սոցիալ-տնտեսական զարգացման, ստեղծագործական արդյունաբերության զարգացման, Հայաստանի ճանաչելիության մեծացման կարեւոր գործոն: Այս առումով կարեւորելու ենք մշակույթի եւ արվեստի կապը կրթության, գիտության եւ արդյունաբերության հետ:
2. Պետությունը մշակութային ոլորտում լինելու է հաշվետվողական եւ թափանցիկ: Ընթացիկ բոլոր նախագծերը եւ ծրագրերը, ինչպես նաեւ արված աշխատանքների արդյունքները հասանելի եւ տեսանելի են լինելու հանրությանը նաեւ առցանց հարթակներում:
3. Պետության մշակութային քաղաքականությունը միտված է լինելու «արվեստի արտահանմանը» եւ միջազգայնացմանը, այն է՝ պետական եւ հանրային ֆոնդերի միջոցով խրախուսելու ենք արվեստագետներին, որպեսզի իրենց լավագույն ստեղծագործությունները ներկայացնեն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս: Հայաստանը աշխարհին ճանաչելի է դառնալու նաեւ իր ժամանակակից եւ դասական ստեղծագործողներով եւ ստեղծագործություններով:
4. Պետական մշակութային քաղաքականության առանձնահատուկ հոգածության առարկա են լինելու նաեւ սկսնակ, ոչ փորձառու, ոչ ճանաչված, բայց զգալի ներուժ ունեցող արվեստագետները:
5. Միջոցներ ենք ձեռնարկելու հեռուստաեթերի պատշաճ մակարդակի ապահովման ուղղությամբ. հեռուստատեսային եթերը մաքրվելու է մարդկանց կրթական ցենզը եւ հարաբերությունների մակարդակն իջեցնող, հանրային հարաբերություններին փոխադարձ արհամարհանքի եւ ագրեսիվության ենթատեքստ հաղորդող բովանդակությունից: Կրթական եւ մշակութային քաղաքական առանցքային նպատակը դառնալու է հանրության կրթական ցենզի շարունակական բարձրացումը:

Մշակույթի ոլորտում տարվող քաղաքանությունը ստեղծելու է այնպիսի պայմաններ, որ տարբեր երկրներում ստեղծագործող մարդիկ ցանկություն ունենան հաստատվել Հայաստանում: Սա կարեւորագույն թիրախ է Հայաստանը միջազգային ասպարեզում ճանաչելի դարձնելու եւ մշակութային դերը վերականգնելու համար:

Հանրային կառավարման արտադրողականության բարձրացում և լավ կառավարման սկզբունքների ներդրում

17. Հանրային կառավարման արտադրողականության բարձրացում եւ լավ կառավարման սկզբունքների ներդրում

Պետական կառավարման համակարգի արդյունավետության խնդիրն ուղղակիորեն կապված է հանրային միջոցների, այն է՝ բոլորիս կողմից վճարվող հարկերի արդյունավետ ծախսման հարցի հետ: Մեր գնահատմամբ՝ Հայաստանում պետական կառավարման համակարգն ուռճացված է եւ ոչ արդյունավետ: Անցած վեց ամիսների ընթացքում այս իրողության ծավալների հետ լավագույնս ծանոթանալով՝ մենք վերահաստատում ենք տարիներ ի վեր արտահայտված մեր այն համոզմունքը, որ պետական կառավարման համակարգում անհրաժեշտ են վճռական փոփոխություններ:

Արմատապես փոխելու ենք պետական կառավարման համակարգի ձեւավորման եւ զարգացման փիլիսոփայությունը: Դրա հիմքում այլեւս չեն լինելու ազգակցական կապերը, կոնկրետ անհատների համար մարմիններ եւ նախարարություններ ձեւավորելու, «լուռումունջ կատարողներին» պատասխանատու պաշտոններում նշանակելու մոտեցումները, այլեւս չեն լինելու սեռային կարծատիպերով կայացվող որոշումներ, սեռային, տարիքային կամ ցանկացած այլ խտրականություն, չի լինելու այլակարծությունը լռեցնելու հետեւողական վարքագիծը:

Եթե մինչհեղափոխական համակարգում հնարավոր էր նաեւ «հաջողությունների» արձանագրումը կոռուպցիոն, հովանավորչական, ապօրինությունների միջոցով, նոր համակարգում հաջողության հասնելու բանաձեւը դառնալու են կրթությունը, հմտությունը, աշխատասիրությունը, կրթական մակարդակի եւ մասնագիտական հմտությունների շարունակական զարգացումը:

Մենք որդեգրելու ենք այնպիսի մոտեցում, որն անաչառ կերպով գնալու է պետական մեքենայի վրա ծախսվող յուրաքանչյուր դրամի հասցեականության եւ արդյունավետության հետեւից: Պետական կառավարման համակարգում հստակ ամրագրելու ենք գործառույթ-մարմին-պատասխանատվություն-արդյունք-գնահատական տրամաբանական շղթան, կառավարման համակարգին ներհատուկ է լինելու համընդհանուր, ստանդարտացված, օբյեկտիվ մոտեցումների եւ ծախսարդյունավետ լուծումների սկզբունքը: Միեւնույն ժամանակ մեզ համար անընդունելի է կուրորեն կրճատելու կամ ուղղակի թվեր «նկարելու» համար կրճատման վարժություններ կատարելը, ինչը շատ հաճախ արվել է նախկինում:

Մենք համոզված ենք, որ Հայաստանի նման տնտեսություն ունեցող երկրի համար 17 նախարարությունը՝ իր տեսանելի եւ անտեսանելի մարմինների չարդարացված ճոխությամբ, գործառույթների եւ ոլորտների կրկնողությամբ, դրա հետեւանքով առաջացած անարդյունավետությամբ եւ կրկնությամբ, պատասխանատվության մեխանիզմների փոշիացմամբ, անհիմն եւ լուրջ բեռ է հարկատուների ուսերին: Մեզ պետք է ծախսարդյունավետ, դինամիկ, ճկուն եւ մրցունակ պետական կառավարման համակարգ:

Պետական համակարգի արտադրողականության եւ արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացնելու ենք հետեւյալ միջոցառումները՝

1. հանրային կառավարման համակարգի ախտորոշման հիման վրա սահմանելու ենք ոլորտի բարեփոխումների առաջնահերթությունները եւ վարչապետի աշխատակազմում ձեւավորելու ենք հատուկ մարմին, որը համակարգելու է ոլորտային բարեփոխումները: Արդյունքում դանդաղ եւ ոչ արդյունավետ պետական մեքենան դարձնելու ենք դինամիկ եւ արագ արձագանքող՝ ավելորդ բյուրոկրատական ընթացակարգերի կրճատման եւ էլեկտրոնային կառավարման համակարգի հետագա զարգացման միջոցով:
2. վեր ենք հանելու պետական բոլոր գերատեսչությունների կրկնվող գործառույթները եւ վերջիններիս օպտիմալացման արդյունքում մեծացնելու ենք պետական գերատեսչությունների ծախսարդյունավետությունը եւ աշխատանքի արդյունավետությունը: Այնուհետեւ կատարողականի գնահատման համակարգի բարեփոխման արդյունքներով փոքրացնելու ենք պետական ահռելի մեքենան՝ նպաստելով պետական ռեսուրսների ճիշտ կառավարմանը եւ բարձրացնելով պետական աշխատողների վարձատրությունը: Այս խնդիրների լուծումը, սակայն, չի հանգեցնելու կադրային ջարդի եւ գործազրկության, եւ այս բարեփոխումների համատեքստում մշակելու ենք միջոցառումներ այս ռիսկերը չեզոքացնելու համար:
3. բացառելու ենք պետական պաշտոններում հովանավորչության կամ կոռուպցիայի այլ դրսեւորումների միջոցով աշխատանքի ընդունումն ու առաջընթացը եւ ամրապնդելու ենք բարեվարքության կանոնները: Ներդնելու ենք մերիտոկրատական՝ արժանիքների վրա հիմնված առաջխաղացման սկզբունքը հանրային եւ քաղաքացիական ծառայության մեջ, ինչի արդյունքում պետական պաշտոնները տրվելու են լավագույններին: Իրականացնելու ենք մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարում, այդ թվում՝ պետական ծառայողների պարբերական վերապատրաստում՝ ուղղված բարեփոխված կատարողականի գնահատման համակարգով վեր հանված խնդիրների լուծմանը:
4. պետական քաղաքականության շարունակականությունն ու կանխատեսելիությունն ապահովելու եւ պետական միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անցում ենք կատարելու ռազմավարական պլանավորման, այդ թվում՝ վերանայելու ենք առկա ռազմավարությունները, համակցելու ենք վերջիններս եւ մշակվելիք բոլոր ռազմավարական փաստաթղթերը կառավարության հնգամյա ծրագրերի, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի եւ ամենամյա ծրագրային բյուջեի հետ: Քաղաքական որոշումների արդյունավետությունը եւ թիրախայնությունը մեծացնելու նպատակով անցում ենք կատարելու համապարփակ եւ խորը ոլորտային ուսումնասիրման, քաղաքականությունների վերլուծության, մշակման եւ գնահատման արդի մեթոդներին՝ ձեւավորելով փաստերի եւ մեծ տվյալների վերլուծության մշակույթ, կարողություններ եւ ինստիտուցիոնալ հենք:
5. պետական եւ մասնավոր ոլորտում տվյալների հասանելիության մեծացման եւ վերլուծության զարգացման նպատակով մշակելու ենք Տվյալների ազգային ռազմավարություն, որտեղ սահմանելու ենք Ազգային վիճակագրական կոմիտեի բարեփոխումների ուղին, տվյալների հավաքագրման, մշակման, տարածման սկզբունքները, վարչական բոլոր ռեգիստրների փոխգործելիության անհրաժեշտությունը, ինչն իր ազդեցությունն է ունենալու ինչպես պետական կառավարման համակարգի արդյունավետության, այնպես էլ գիտության եւ տնտեսության զարգացման վրա:

6. քաղաքականությունների մշակումը ժամանակակից տեխնոլոգիաների եւ այլ հարթակների ներդրման միջոցով դարձնելու ենք հնարավորինս մասնակցային, արագ արձագանքող եւ ներառական՝ ապահովելով դրանց շահառուների շահերի պաշտպանությունը, մասնավոր հատվածի եւ գիտական հանրույթի հետ համագործակցությունը, պետություն-քաղաքացի մշտական երկխոսությունը: Տվյալների ազգային ռազմավարության մշակման արդյունքում մեծացնելու ենք պետական համակարգի թափանցիկությունը՝ տեղայնացնելով բաց կառավարման նախաձեռնությունների միջազգային լավագույն փորձը: Այս համատեքստում հատկապես կարեւորելու ենք ուղիղ ժողովրդավարության մշակույթի զարգացումը տեղական եւ համապետական հանրաքվեների ինստիտուտի միջոցով:
7. հանրային ծառայությունների մատուցման առանցքային նպատակն ենք դարձնելու դրանց որակի եւ հասանելիության բարձրացումը: Այդ նպատակով ապահովելու ենք ծառայությունների թվայնացում, դրանց մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ, ինչպես նաեւ «միայն մեկ անգամ» սկզբունքի կիրառում, ինչը հնարավորություն կտա պետական մարմինների միջեւ տվյալների փոխանակման շնորհիվ քաղաքացուց ցանկացած տվյալի միայն մեկ անգամ ստացումը: Արդյունքում ծառայությունները կմատուցվեն ավելի արագ: Ծառայությունների որակի բարձրացման ուղղությամբ իրականացնելու ենք ծառայությունների մշտական գնահատում, տվյալների հավաքագրում, քաղաքացիների կարծիքի հարցումներ, ինչը հնարավորություն կտա գույքագրելու առկա խնդիրները եւ մշակելու դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

18. Հանրային ֆինանսների պատասխանատու կառավարում

Ծախսային քաղաքականությունն արդյունավետ է, եթե հանրային ֆինանսները օգտագործվում են նպատակային եւ խնայողաբար: Հանրային միջոցների օգտագործման հստակ ներգործությունը գնահատելու կամ ծախսային քաղաքականության արդյունավետությունը չափելու համար մենք ներդնելու ենք հաշվետվողականության այնպիսի ստանդարտներ, որոնք թույլ կտան պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման քանակական եւ որակական արդյունքային ցուցանիշների սահմանմամբ բարելավել ֆինանսական կարգապահությունը: Պետական ծախսային քաղաքականության առաջնահերթ խնդիրը պետք է լինի պետական պարտավորությունների նվազեցումը, նոր պարտավորություն ստանձնելու սահմանափակումը (ոչ թե միավոր արժեքների, այլ ծավալային պարտավորությունների մասով) եւ պետական ծախսեր իրականացնելու առաջնահերթությունների սահմանումը: Առաջիկա տարիներին ծախսային քաղաքականությունն ուղղված է լինելու մարդկային կապիտալի կուտակմանը, ներառական աճի խթանմանը եւ հավասարաչափ տարածքային զարգացմանը:

Այս առումով նախատեսում ենք հետեւյալ միջոցների իրականացումը.

1. հանրային ֆինանսները տնօրինելու ենք նպատակային եւ խնայողաբար՝ սահմանված նպատակին նվազագույն միջոցներով հասնելու տրամաբանությամբ:
2. ներդնելու ենք հանրային ֆինանսների կառավարման փորձաքննական համակարգ եւ նախքան ծրագրի ֆինանսավորումը գնահատելու ենք նախատեսվող հատկացման համարժեքությունն ակնկալվող արդյունքին:
3. ներդնելու ենք «հավելյալ արժեքի ստեղծման նպատակադրում ունեցող արդի գործիքակազմ», որը թույլ կտա հանրային ֆինանսների կառավարման համակարգում պլանային քանակական ցուցանիշներ սահմանելու մեթոդաբանությունից անցում կատարել որակական ցուցանիշների սահմանմամբ թիրախային բյուջետավորման համակարգի:
4. մշակելու ենք պետական ծառայողական եւ այլ նշանակությամբ շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներին հատկացվող վառելիքի ձեռքբերման, սպառման ընթացակարգերի արդյունավետության գնահատման (հատկացված վառելիքի դիմաց՝ ակնկալվող արդյունք տրամաբանությամբ), ինչպես նաեւ վառելիքի գողոնի կանխման/բացահայտման առցանց համակարգ:
5. ներդնելու ենք պետական գնումների արդար եւ թափանցիկ էլեկտրոնային համակարգ: Օրենսդրորեն ամրագրելու ենք ապրանքների եւ ծառայությունների (հատկապես ծրագրային ապահովման եւ տեխնիկայի մասով) նկարագրման միասնական եւ չափելի ստանդարտներ:
6. էլեկտրոնային եղանակով մշտադիտարկելու ենք ապրանքների եւ ծառայությունների սահմանված ժամկետներում, նախանշված որակով եւ կարգով մատակարարումը: Շեղումների դեպքում արձանագրված խնդիրների հիման վրա շարունակաբար կատարելագործելու ենք օրենսդրական դաշտը՝ անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելով նաեւ գնումների էլեկտրոնային համակարգով:
7. բացահայտելու ենք պետական գնումների ոլորտում իրականացված չարաշահումները: Առաջնորդվելով ակնկալվող արդյունք՝ ապրանքի տեխնիկական նկարագրով սահմանված պահանջ, փաստացի արդյունք եւ ծախսված գումար համարժեքության գնահատմամբ՝ վերականգնելու ենք պետությանը պատճառված վնասները:
8. վերանայելու ենք գնումների կազմակերպման եւ իրականացման կանոնակարգերը՝ նվազագույնի հասցնելով մեկ անձից գնումների ծավալը: Որպես թիրախ սահմանել ենք մեկ անձից գնումների ծավալի տարեկան 20%-ով կրճատում, ընդհանուր գնումների մեջ մեկ անձից իրականացվող գնման տեսակարար կշռի առնվազն 10%-ով կրճատում:
9. սահմանելու ենք պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվություններ հրապարակելու եւ տարեկան մեկ անգամ անկախ աուդիտ անցնելու պահանջ:
10. ներդնելու ենք պետական պարտքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ինչը թույլ կտա մշտադիտարկել ՀՀ ստանձնած պարտավորությունները, այդ թվում՝ ստանալ տեղեկատվություն ստանձնած վարկային համաձայնագրերի կատարման ընթացքի, ձեւավորված պարտավորության վճարների (հիմնականում կատարողականով սահմանված ժամանակացուցային շեղումների), դրամաշնորհային բաղադրիչների, տոկոսների եւ այլնի վերաբերյալ: Սա հնարավորություն կտա գնահատելու դիտարկվող ծրագրում/ գործարքում ներգրավված մարմինների գործունեության արդյունավետությունը:

11. մշակելու եւ ներդնելու ենք միջազգային դոնոր կազմակերպությունների հետ փոխգործելիության էլեկտրոնային հարթակ, ինչը թույլ կտա բարձրացնել դոնորների համակարգման արդյունավետությունը եւ ցանկացած պահի տեղեկանալ իրականացվող կամ մեկնարկային փուլում գտնվող ծրագրի ընթացիկ վիճակի, այդ թվում՝ առկա խոչընդոտների վերաբերյալ: Այս պահին առկա չէ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ-ում իրականացվող ծրագրերի ամբողջական տվյալների բազա, ինչը ծրագրերի արդյունավետության, փոխկապակցվածության գնահատման տեսանկյունից առաջացնում է խնդիրներ:

19. Արդարադատություն, հասարակական կարգ եւ օրենքի գերակայություն

Մարդկային արժանապատվությունը եւ իրավահավասարությունը առանցքային են մեր ծրագրում: Երաշխավորում ենք, որ ապահովելու ենք իրավունքի եւ օրենքի գերակայություն, օրենքի առջեւ բոլորի հավասարություն: Այսուհետ իրավունքն ու օրենքը չեն գործելու ընտրողաբար: Ոչ մի սոցիալական խումբ մեկ այլ խմբի նկատմամբ իրավական արտոնություններ չի կարող ունենալ: Մարդու իրավունքների պաշտպանվածությունը հատուկ ուշադրության է արժանանալու նաեւ մարդկանց եւ իրավապահ կառույցների միջեւ հարաբերություններում՝ բացառելու համար խոշտանգումների, բռնությունների եւ նվաստացումների հնարավորությունը եւ ապահովելու համար մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը բոլոր պարագաներում:

Ապահովելու ենք դատական իշխանության անկախությունն իշխանության մյուս ճյուղերից, նպաստելու ենք դատարանների արդյունավետության մեծացմանը, բացառելու ենք կոռուպցիոն որեւէ գործարք՝ կանխարգելիչ եւ պատժիչ միջոցառումների շնորհիվ:

Ոլորտում իրականացվելիք հիմնական բարեփոխումները ներկայացնում ենք ստորեւ:

1. Իրագործելու ենք դատարանների անկախության ապահովման սահմանադրական հրամայականը: Այս իմաստով դատարանների անկախությունը պետք է ներառի ինչպես դրանց անկախությունը գործադիր եւ օրենսդիր իշխանության մարմիններից, այնպես էլ անկախությունը դատական իշխանության մարմինների համակարգում այլ դատական ատյանների եւ դատական պաշտոնյաների ազդեցությունից: Դատարանների անկախության ապահովման նպատակով կարեւորվում է դատավորների համայնքի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում դատարանակազմական եւ դատավարական օրենսդրական փոփոխությունների մշակված փաթեթի ընդունումը, որն ունենալու է նույն նպատակի՝ դատարանների անկախության ապահովման համար երկու համընթաց գործողությունների արդյունավետ ապահովում՝ դատարանների անկախությունը դատական իշխանությունից դուրս արտաքին եւ դատական իշխանության ներսում հնարավոր ազդեցություններից:
2. Լուծելու ենք դատարանների աշխատանքի արդյունավետության եւ դատական համակարգի բեռնաթափման խնդիրները: Արդարադատության մատչելիությունը եւ այն արդյունավետորեն ապահովելու համար անհրաժեշտ է դատավորների եւ դատարաններին սպասարկող մասնագիտական անձնակազմի թե՛ քանակական եւ թե՛ որակական աճ: Այս խնդիրը Կառավարության եւ Ազգային ժողովի համատեղ ջանքերի եւ դատավորների համայնքի հետ համաձայնեցված ծրագրային գործունեություն պետք է դառնա: Դատարանների աշխատանքի բեռնաթափման մեկ այլ հնարավորություն ենք դիտելու վեճերի լուծման այլընտրանքային հնարավորությունների ներդրումը եւ արդեն ներդրված մեխանիզմների ամբողջ թափով գործարկումը:
3. Քայլեր ենք ձեռնարկելու դատարանների եւ դատական իշխանության հեղինակության վերականգնման ուղղությամբ: Դատարանների հեղինակության վերականգնումն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում դատարաններին վերապահված սահմանադրական գործառույթի իրականացման արդյունավետության եւ հանրության մոտ դատական իշխանության նկատմամբ բավարար վստահության ամրագրման համար: Հանցագործություններ եւ պետական միջամտություն

պահանջող այլ իրավախախտումներ, քաղաքացիաիրավական վեճեր եւ հակադիր օրինական շահերը բնականորեն առաջացող եւ գոյատեւող խնդիրներ են, որոնց հետ առնչվում է ցանկացած ժողովրդավարական հասարակություն: Սոցիալական համերաշխության եւ պետության կողմից արդարադատության ապահովման սահմանադրական գործառույթի արդյունավետությունը պայմանավորված է ոչ այնքան վերը նշված երեւույթների քանակից, որքան դրանց նկատմամբ պետության արձագանքից եւ լուծումից, նախեւառաջ՝ արդարադատության միջոցով: Այս առումով դատարանների նկատմամբ վստահության վերականգնումն առաջին հերթին իրենց՝ դատարանների եւ դատավորական համայնքի հոգածության խնդիր պետք է լինի, իսկ գործադիր եւ օրենսդիր իշխանությունները դրան ամեն գնով օժանադակելու եւ աջակից լինելու դերն ունեն: Այս առումով հատկապես կարեւորվում է դատավորների էթիկայի կանոնների խստիվ պահպանման նկատմամբ հետեւելու դատական համակարգի ջանքերը, որոնց նյութական եւ օրենսդրական ապահովումը համապատասխանաբար իրականացնելու ենք գործադիր եւ օրենսդիր իշխանությունները:

4. Իրագործելու ենք անցումային արդարադատություն, որը Հայաստանի իրավապահ եւ արդարադատության համակարգերի գործունեության ընթացքում դրանց սահմանադրական նպատակների տեւական խեղաթյուրման հետեւանքները վերականգնելու վերջին հնարավոր անցնցում միջոցն է եւ կենսական անհրաժեշտություն է քաղաքացիական համերաշխության վերականգնման նպատակի համար: Անցումային արդարադատության շրջանակներում պետական մարմինների կամ ինստիտուտների ստեղծմամբ չեն վերացվելու նույն գործառույթի համար կոչված Հայաստանի սահմանադրական մարմիններն եւ ինստիտուտները: Անցումային արդարադատության շրջականերում ձեռնարկվելիք միջոցները եւ հնարավորությունները լինելու եւ մնալու են Սահմանադրության համապատասխանության շրջանակում: Ավելին, այդ միջոցները եւ մարմինները նպատակաուղղված են լինելու քաղաքացիների սահմանադրական խախտված իրավունքների եւ ազատությունների, ինչպես եւ պետական սահմանադրական խափանված գործառույթների վերականգնման նպատակին:
Անցումային արդարադատության միջոցներն ուղղված են լինելու քաղաքացիական համերաշխության վերականգնմանը՝ առաջնահերթությամբ հետեւյալ մասնավոր գործունեության ուղղություններով.

- մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների զանգվածային խախտումների զոհերի իրավունքների վերականգնում,
- ճշմարտության արձանագրում,
- պետությանը կամ քաղաքացիներին էական վնաս հասցրած կոռուպցիոն գործարքների քննությամբ եւ մեղավորներին պատասխանատվության կանչելու միջոցով դրանց հետեւանքների չեզոքացում:

5. Անցումային արդարադատությունը պետք է գործարկվի առնվազն հետեւյալ ոլորտների/գործերի/տուժողների խմբի ուղղությամբ՝ դրանցում տուժողների իրավունքների վերականգնման եւ ճշմարտության արձանագրման նպատակով (սակայն չսահմանափակվելով միայն այս ցանկով).

- անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների արդյունքների կեղծված լինելու վերաբերյալ հայտարարությունների անաչառ գնահատման համար, ընտրությունների հետընտրական գործընթացում քաղաքական հետապնդումների, խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքից եւ կյանքի իրավունքի խախտումների գործադրումից տուժողներ (իրավախախտումների քննության եւ տուժողներին պատճառված գույքային եւ բարոյական

վնասի հատուցման, արձանագրված ճշմարտությունը հանրությանը մատուցելու եւ դրա շուրջ հանրային քննարկումներ ծավալելու միջոցով),

- Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարման միջոցով սեփականազրկված քաղաքացիներ (բողոքարկման ժամկետների վերականգնման, գույքային փոխհատուցում ապօրինի գույքազրկման դիմաց),
- ոչ մարտական պայմաններում զոհված զինվածառայողներ (տուժողներին պատճառված գույքային եւ բարոյական վնասի փոխհատուցում, իրականացված քննության արդյունքների վերանայում):

6. Անցումային արդարադատության գործիքներ կարող են կիրառվել նաեւ.

- Երրորդ հանրապետության գոյության ընթացքում՝ հանրային հնչեղություն ունեցող բոլոր հանցագործությունների բացահայտման, ինչպես նաեւ 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության վերաբերյալ հանրությանն ամբողջական եւ վստահելի պատասխաններ տալու համար,
- անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների արդյունքների կեղծված լինելու վերաբերյալ հայտարարությունների անաչառ գնահատման համար,
- երբեւէ Հայաստանի Հանրապետության նախագահի, վարչապետի, նախարարի, ԱԺ պատգամավորի, կառավարությանն առընթեր մարմինների, դատախազության եւ այլ բարձրաստիճան ղեկավար պաշտոններ զբաղեցրած անձանց եւ նրանց հետ փոխկապակցված անձանց գույքային վիճակի ուսումնասիրության ու վերլուծության, այդ ուսումնասիրության ու վերլուծության արդյունքների հրապարակման եւ սրանից բխող օրենսդրական քայլերի ձեռնարկման համար, որ կներառեն նաեւ այնպիսի մեխանիզմներ, որոնք հանրությանը հնարավորություն կտան ընթացիկ վերահսկողության տակ պահել պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց ունեցվածքն ու եկամուտները:

7. Իրականացնելու ենք երթեւեկության անվտանգության համակարգի էական բարեփոխումներ: Մասնավորապես՝ երթեւեկության կանոնների խախտումների համար նշանակվող տուգանքների առավելագույն չափ է սահմանվելու 29 հազար դրամը, փոխարենը ներդրվելու է խախտումների համար վարորդի միավորների նվազեցման, վարորդական իրավունքից զրկելու համակարգ: Ճանապարհային ոստիկանության հենքի վրա ստեղծելու ենք պարեկային ծառայություն, որը կատարելու է երթեւեկության եւ հանրային անվտանգության ապահովման գործառույթներ:

20. Հակակոռուպցիոն պայքար



Կոռուպցիայի դեմ պայքարի հիմքում մեր այն համոզմունքն է, որ կոռուպցիոն ցանկացած գործարք նվազեցնում է մասնավոր ընկերությունների արտադրողականությունը, խաթարում է ազատ մրցակցությունն ու սոցիալական արդարությունը եւ հանգեցնում է հանրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործմանը: Արդյունքում տուժում է եւ՛ պետությունը, եւ՛ քաղաքացին: Կոռուպցիայի դեմ պայքարում մենք կենտրոնանալու ենք համալիր միջոցառումների մշակման վրա, որոնք ընդգրկելու են ռազմավարական/օրենսդրական, ինստիտուցիոնալ եւ հանրային իրազեկման ուղղությունները:

1. Թեպետ կոռուպցիայի վերացման քաղաքականության մշակողները պետական տարբեր գերատեսչություններ են, կա կարիք մշտական հիմունքներով գործող միասնական ունիվերսալ մարմնի ստեղծման, որը կդառնա կոռուպցիոն դեպքերի հետաքննողը, հակակոռուպցիոն ծրագրերի համակարգողն ու պարբերական մշտադիտարկումն իրականացնողը, ինչպես նաեւ հանրային իրազեկման արշավների կազմակերպողը: Նպատակը մասնագիտական մարմնի միջոցով պետական գերատեսչությունների գործունեության մշտադիտարկումը, արդյունավետ երկխոսության ստեղծումը ու ծրագրերի արդյունավետության գնահատումն իրականացնելն է:
2. Ինստիտուցիոնալ բարեփոխումների մեջ կենտրոնական է լինելու ՀՀ հաշվեքննիչ պալատի իրավասությունների եւ կարողությունների զարգացումը, ինչը հնարավորություն է տալու արդյունավետ վերահսկել պետական միջոցների օգտագործումը եւ հաշվետու լինել քաղաքացիների առջեւ:
3. Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար առաջնային ենք համարում գործողությունների ռազմավարական պլանավորումը: Ըստ այդմ՝ մենք միտված ենք լինելու ոչ միայն կոռուպցիոն միջադեպերի բացահայտմանը եւ դրանց վերացմանն ուղղված միջոցառումների մշակմանը, այլեւ կոռուպցիայի կանխարգելմանը:
4. Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար կոռուպցիայի բոլոր դրսեւորումների համար համապատասխան սահմանումներ ու սանկցիաներ ենք սահմանելու օրենսդրությամբ: Կոռուպցիայի կանխարգելման համար մեծ նշանակություն ենք տալու կոռուպցիայի համար պատիժների խստացմանը:
5. Հակակոռուպցիոն միջոցառումների համար առանցքային է դրանց պարբերական մշտադիտարկումը ոչ միայն հանրային կարծիքի հարցումներով, այլեւ յուրաքանչյուր քաղաքականության ազդեցության գնահատման միջոցով: Ըստ այդմ՝ իրականացնելու ենք կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հարցումներ, ինչպես նաեւ մշակելու ենք հակակոռուպցիոն ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմներ: Այս առումով ապահովելու ենք ազդարարի ինստիտուտի հետագա զարգացումը եւ կոռուպցիոն դեպքերի բացահայտման թեժ գծի գործարկումը:
6. Ապահովելու ենք համապատասխան հանրային իրազեկման արշավների իրականացումը՝ թիրախավորելով հատկապես դպրոցահասակներին, ինչպես նաեւ բարեվարքության նորմերի տարածումը ինչպես հանրության շրջանում, այնպես էլ պետական կառավարման մարմիններում: Ներդնելու ենք շահերի բախման դեպքերի բացահայտման համակարգ բարեվարքության մշակույթի տարածման ենթատեքստում: Արդյունքում կոռուպցիոն միջոցներին դիմելը դառնալու է ոչ միայն պատժելի, այլեւ ոչ պատվաբեր:
7. Կոռուպցիայի դեմ պայքարում սերտորեն համագործակցելու ենք քաղաքացիական հասարակության ինստիտուտների, մասնավորապես՝ հետաքննող լրագրողների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով վերջիններիս հետ գործառույթների բաժանում եւ որոշ գործառույթների պատվիրակում՝ մեծացնելով միջոցառումների արդյունավետությունը եւ թիրախայնությունը եւ ապահովելով ռեսուրսների արդյունավետ օգտագործում:

50 քայլ դեպի երջանիկ անհատ, հոգատար հանրություն եւ հզոր պետություն

1. Զարգացնելու ենք հայրենական ռազմական արդյունաբերությունը:
2. Հետեւողական ենք լինելու բանակցային գործընթացում Արցախը՝ որպես հակամարտության հիմնական կողմ ներգրավելու հարցում:
3. Վերացնելու ենք սփյուռքի ներկայացուցիչներին ՀՀ կառավարման համակարգում ներգրավելու օրենսդրական արգելքները:
4. Նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի եւ շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը:
5. Լրամշակելու ենք «Շքեղության հարկի մասին օրենքը», ընդլայնելու եւ հանրայնացնելու ենք շքեղության հարկի օբյեկտ եւ շքեղության հարկ վճարողների ցանկը:
6. Հասցեական հարկային քաղաքականությամբ եւ տարբերակված մոտեցումների կիրառմամբ նպաստելու ենք Երեւանից դուրս՝ հատկապես սահմանամերձ գոտիներում գործարար համայնքի կայացմանը:
7. Տարեկան մինչեւ 20 միլիոն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսն ազատելու ենք հարկերից:
8. Ներդնելու ենք ճանապարհաշինական աշխատանքների որակի ապահովման միջազգային ստանդարտներին համապատասխանող համակարգ, ճանապարհների պահպանման եւ ընթացիկ շահագործման ավտոմատ հսկողական համակարգ:
9. Ներդնելու ենք ուղեւորափոխադրումների կառավարման էլեկտրոնային համակարգ եւ համացանցով ապահովելու ենք մեկնարկային/ժամանման ժամանակացույցի հասանելիությունը բոլոր քաղաքներում:
10. 2023 թվականին մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների 70 եւ ավելի տոկոսը լինելու են բարեկարգ վիճակում:
11. Զարգացնելու ենք վերականգնվող էներգետիկ եւ էներգախնայող համակարգերը:
12. Մշակելու ենք ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարություն եւ իրականացնելու ենք ոռոգման համակարգերի արդիականացման պետական աջակցության ծրագրեր:
13. Բարձրացնելու ենք սուբսիդավորման մեխանիզմների հասցեականությունը՝ ապահովելով շահառու համայնքների կարիքների բավարարման հստակ մեխանիզմներ:
14. Օժանդակելու ենք կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը եւ սահմանելու ենք կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ:
15. Ներդնելու ենք գյուղատնտեսության ապահովագրական համակարգ:
16. Աջակցելու ենք հակակարկտային ցանցերի ներդրմանը:
17. Աջակցելու ենք հայկական ՏՏ, ՏՀՏ, բարձր տեխնոլոգիական արտադրանքի մրցունակ բրենդի ձեւավորմանը եւ ապահովելու ենք միջազգային շուկաներում պահանջարկ ունեցող արտադրանքի պատշաճ ներկայացումը:
18. Աջակցելու ենք մարզերում նոր տեխնոլոգիական կենտրոնների ստեղծմանը:
19. Աջակցելու ենք «ՏՏ գյուղ» ծրագրի իրականացմանը՝ Հայաստանը միջազգային ՏՏ մասնագետների համար ցանկալի ապրելու վայր դարձնելու նպատակով:

20. Բարձրացնելու ենք պետական աշխատողների աշխատավարձերը, վարելու ենք աշխատավարձերի բարձրացումը խրախուսող քաղաքականություն:

21. Պետական համակարգում ամրապնդելու ենք արժանիքների հիման վրա պաշտոն ստանձնելու սկզբունքը:

22. Անցում ենք կատարելու ռազմավարական պլանավորման եւ փաստերի ու տվյալների վերլուծության վրա հիմնված քաղաքականության մշակման մոդելի:

23. Զարգացնելու ենք ուղիղ ժողովրդավարության մշակույթը տեղական եւ համապետական հանրաքվեների ինստիտուտի միջոցով:

24. Ստեղծելու ենք հանրային ծառայությունների մատուցման մեկ միասնական կենտրոն եւ էլեկտրոնային հարթակ՝ ծառայություններ մատուցելով «միայն մեկ անգամ» սկզբունքով:

25. Հանրային ֆինանսները տնօրինելու ենք նպատակային եւ խնայողաբար՝ սահմանված նպատակին նվազագույն միջոցներով հասնելու տրամաբանությամբ:

26. Ներդնելու ենք պետական գնումների արդար եւ թափանցիկ էլեկտրոնային համակարգ:

27. Բացահայտելու ենք պետական գնումների ոլորտում իրականացված չարաշահումները, վերականգնելու ենք պետությանը պատճառված վնասները:

28. Վերանայելու ենք գնումների կազմակերպման եւ իրականացման կանոնակարգերը՝ ապահովելով մեկ անձից գնումների ծավալի տարեկան 20%-ով կրճատում:

29. Ստեղծելու ենք կոռուպցիոն դեպքերի կանխարգելման, հակակոռուպցիոն ծրագրերի համակարգման միասնական անկախ մարմին:

30. Բեռնաթափելու ենք դատական համակարգը, ներդնելու եւ գործարկելու ենք վեճերի լուծման այլընտրանքային հնարավորություններ:

31. Գործարկելու ենք անցումային արդարադատություն առնվազն հետեւյալ ուղղություններով՝ անկախությունից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրությունների արդյունքների կեղծված լինելու վերաբերյալ հայտարարությունների անաչառ գնահատման համար, Հայաստանում պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարման միջոցով սեփականազրկված քաղաքացիներ, ոչ մարտական պայմաններում զոհված զինվածառայողներ:

32. Ճանապարհային ոստիկանության հենքի վրա ստեղծելու ենք պարեկային ծառայություն, որը կատարելու է երթեւեկության եւ հանրային անվտանգության ապահովման գործառույթներ:

33. Երթեւեկության կանոնների խախտումների համար նշանակվող տուգանքների առավելագույն չափ է սահմանվելու 29 հազար դրամը, փոխարենը ներդրվելու է խախտումների համար վարորդի միավորների նվազեցման, վարորդական իրավունքից զրկելու համակարգ:

34. Ներդնելու ենք համընդհանուր բժշկական ապահովագրության համակարգ:

35. Բարձրացնելու ենք նախադպրոցական կրթության որակը, հասանելիությունը եւ մատչելիությունը՝ ապահովելով 3 տարեկանից բարձր երեխաների 70%-ի ներգրավումը նախադպրոցական կրթական հաստատություններում:

36. Հանրակրթության ոլորտում արդիականացնելու ենք ուսումնական ծրագրերը, ապահովելու ենք բնական եւ տեխնիկական առարկաների եւ օտար լեզուների խորացված ուսուցում, զարգացնելու ենք քաղաքացիական, ֆինանսական ու ձեռնարկատիրական կրթությունը եւ մեդիագրագիտությունը:

37. Ապահովելու ենք ուսուցչի մասնագիտության հեղինակության բարձրացում եւ աշխատավարձի աստիճանական բարձրացում:
38. Բարձրագույն կրթության ոլորտում ապահովելու ենք անցումը երրորդ աստիճանին (PhD): Կենտրոնացնելու եւ ուժեղացնելու ենք բուհական համակարգը:
39. Խրախուսելու ենք գիտության, նորարարության եւ իրական հատվածի միջեւ համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առեւտրայնացումը:
40. Մինչեւ 2023 թվականը գործազրկությունը նվազեցնելու ենք 5 տոկոսային նիշով:
41. Մշակելու ենք հատուկ կարիքներ ունեցող անձանց սոցիալական ինտեգրումն ապահովող քաղաքականություններ:
42. Մշակելու ենք երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովելու նախագծեր:
43. Մինչեւ 2023 թվականը վերացնելու ենք ծայրահեղ աղքատությունը, աղքատությունը նվազեցնելու ենք առնվազն 10 տոկոսային նիշով:
44. Բարձրացնելու ենք կենսաթոշակները:
45. Իրականացնելու ենք բարեփոխումներ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում:
46. Իրականացնելու ենք «պարտքը բնապահպանության դիմաց» համակարգի գործարկում, ինչի արդյունքում այն գումարների մի մասը, որը պետք է մասամբ ծառայեր արտաքին պարտքի սպասարկմանը, ուղղվելու է բնապահպանական ծրագրերի իրականացմանը:
47. Ներդնելու ենք աղբի վերամշակման ժամանակակից համակարգ:
48. Զարգացնելու ենք վերամշակող եւ կայուն բնօգտագործումը, հանքարդյունաբերության ոլորտում սահմանելու ենք ամենաբարձր բնապահպանական չափանիշներ:
49. Բարձրացնելու ենք Սեւանա լճի մակարդակը, ինչպես նաեւ գործուն քայլեր ենք ձեռնարկելու լճի աղտոտվածության մակարդակը կտրուկ նվազեցնելու համար:
50. Զարգացնելու ենք ստեղծագործական արդյունաբերությունը, ապահովելու ենք հայկական արվեստի «արտահանում» եւ միջազգայնացում:

ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ՝

ԵՐՋԱՆԻԿ ԱՆՀԱՏ,
ՀՈԳԱՏԱՐ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ,
ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ